Azg
armenian daily

15 ՓԵՏՐՈՒԱՐ 2003 ՇԱԲԱԹ 29 (2714)

Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը վաղուց այսպես կիսված չէր եղել

երեկ երեկոյան ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը լսեց ՄԱԿ-ի տեսչական խմբի երկու ղեկավարների՝ Մոհամմադ ալ Բարադեյի եւ Հանս Բլիքսի զեկուցումները Իրաքում զանգվածային ոչնչացման զենքերի առկայության հարցի մասին: Միջուկային միջազգային վերահսկողության գործակալության ղեկավար ալ Բարադեյի զեկույցը շատ հստակ էր՝ Իրաքում իրենց ստուգումները որեւէ արդյունք չեն տվել միջուկային զենքի կամ ծրագրերի առկայության մասին: Ինչ վերաբերում է Հանս Բլիքսին, վերջինիս խոսքը խիստ հավատարակշռված, բառերը հատիկ-հատիկ ընտրված էին: Զեկուցելով կենսաբանական, քիմիական եւ հրթիռային զենքերի մասին, նա շեշտեց, որ զգալի առաջադիմություն կա իրաքյան կողմից ՄԱԿ-ի տեսուչների հետ համագործակցելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, ասաց նա, տեսուչները հայտնաբերել են քիմիական ու կենսաբանական մեծ քանակությամբ նյութեր, որոնք հաշվառված չեն եղել: Ինչ վերաբերում է հրթիռային համակարգերին, Բլիքսը նշեց, որ բացի «Ալ Սամուդ» տիպի հրթիռներից, Իրաքն ունի նաեւ ավելի հեռահար հրթիռներ, որոնց մասին իրաքցիներն իրենք են տեղեկություններ տվել:

Զեկուցումներին հաջորդեցին Անվտանգության խորհրդի անդամ երկրների արտգործնախարարների ելույթները, որոնք իրենց բովանդակությամբ երկու խմբի էին բաժանվում: Առաջինը՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Չինաստանի եւ Գերմանիայի գլխավորությամբ պահանջում էր առիթ տալ ՄԱԿ-ի տեսուչներին առավել խստացված հսկողության պայմաններում շարունակելու իրենց առաքելությունը, քանի որ, ասում էին նրանք, երկու զեկույցներից էլ պարզ էր դառնում, որ առաջադիմությունն ակներեւ է ու դեռեւս որեւէ պատճառ չկա ռազմական ընտրանին դիմելու: Ավելին՝ Ռուսաստանի արտգործնախարար Իգոր Իվանովը հիշեցրեց, որ այսօր (երեկ) Սուրբ Վալենտինի օրն է, որը խորհրդանշում է մարդկանց միությունն ու միասնությունը, հետեւաբար, կոչ արեց նա, Անվտանգության խորհրդի անդամ երկրները պետք է միասնական կեցվածքով առիթ տան հարցի խաղաղ լուծման:

Հակադիր տեսակետը հնչեցրին, բնականաբար, Ս. Նահանգների պետքարտուղար Քոլին Փաուելը եւ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի քարտուղար Ջեք Սթրոուն: Շատ զգացական էր Քոլին Փաուելի ելույթը, որ, ի տարբերություն մյուս բոլորի, գրավոր չէր: Ս. Նահանգների ներկայացուցչի կարծիքով, ՄԱԿ-ի թիվ 1441 որոշումը ոչ թե տեսչական ստուգումների համար էր, այլ՝ Իրաքի զինաթափման, իսկ արդեն 12 տարի է, որ Բաղդադը խուսանավում ու խաբում է միջազգային հանրությանը:

Ելույթների մեջ հատկանշական էր Սիրիայի արտգործնախարար Ֆարուկ ալ Շարայի խոսքը: Նա հիշեցրեց, որ Իսրայելը տիրապետում է թե՛ միջուկային, թե՛ քիմիական եւ թե՛ կենսաբանական զենքերի լայն պաշարների, որոնք սպանում են տարածաշրջանային երկրներին, սակայն Անվտանգության խորհուրդը երկակի ստանդարտներ կիրառելով «մոռանում» է այդ փաստը:

Անվտանգության խորհրդի եզրակացությունը կլինի ավելի ուշ, հավանաբար վետոների կիրառմամբ:

ՔԱՐՈԶԱՐԾԱՎ

Այս 5 տարվա ընթացքում ես ջանացել եմ ապացուցել, որ երկիրն ապագա ունի

Հայաստանի քարտեզը միշտ իմ առջեւ է

ԿԱԲԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ընդամենը 5 օր է մնացել մեր երկրի համար ճակատագրական օրվան: Քարոզարշավի 24-րդ օրը վաղ առավոտյան հայոց գրերի ուխտատեղին Օշականը, ընդունեց ՀՀ նախագահի թեկնածու Ռոբերտ Քոչարյանին: Նա ծաղիկներ դրեց մեծ ուսուցչապետ Մաշտոցի գերեզմանին, ապա ջերմ ընտանեվարությամբ զրուցեց օշականցիների հետ: «Հայաստանի քարտեզը միշտ իմ առջեւ է», ասաց նախագահը: Նա համարում է, որ այս 5 տարիներից, գլավոր, 2,5-ն է հաջողվել լիարժեք օգտագործել: Սկզբնական ժամանակահատվածը սահմանված է եղել ծախսել ներքաղաքական կնճիռների հարթեցման, երկիրը խաղաղ ընթացքի բերելու վրա: Հետո միայն, կետ առ կետ, իբրեւ աշխատանքային ոճ ու սկզբունք, քարտեզի վրա նշում էր որոբլեմային տարածքները, առանձնացնում դրանք, կազմում պլանային գրաֆիկներ: Հենց նախընտրական ծրագիրն էլ աչքի է ընկնում խիստ կոնկրետությամբ: «Երբեմն ինձ մեղադրում են, թե այդքան կոնկրետ չպետք է լինի ծրագիրը, քանի որ վերընտրվելու դեպքում մեծ պատասխանատվություն է ենթադրում գործող նախագահի համար», կարծում է ՀՀ նախագահը:

Քարոզարշավի մյուս կայանները հաջորդաբար Արագածոտնի մարզի Ոսկեվազ, Ագարակ, Կոշ, Սասնաշեն գյուղերն էին: Գյուղացուն հող, ոռոգման ջուր, ամուր ընտանիք ու զավակին լավ կրթություն է պետք: Բարեփոխումների քամին հոլվելով անցնում է գյուղերի միջով, ամեն տեղ հազիվ հասցնելով մի-մի խնդիր լուծել: Օշական արդեն գազ հասցվել է, Ոսկեվազի 1936 թ. կառուցված դպրոցը նոր-նոր մտցվել է վերանորոգման ծրագրի մեջ, սակայն կաթի համախնդիրը դեռ չի լուծվել: Ագարակի համար առաջնայինը ոռոգման ու խմելու ջուրը, բուժամբուլատորիան ու դպրոցը, գազն են: ՀՀ նախագահը հավաստիացրեց, որ ծրագրված է եւ ամենայն հավանականությամբ կհասցնեն 2-3 տարում գազիֆիկացնել ողջ Հայաստանը:

Տես էջ 2

ՀԱՄԱՌՈՏ

ԱՄՆ-ը դեմ է դարաբաղյան խնդրի ռազմական լուծմանը

ԲԱՔՈՒ, 14 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ - ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ: Ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, Բաքվում ԱՄՆ դեսպան Ռոս Վիլսոնը հանդիպել է Բաքվի Կասպյան համալսարանի ուսանողների հետ, որի ժամանակ անդրադարձել է դարաբաղյան հարցին: Ռոս Վիլսոնը մասնավորապես ասել է, թե Ադրբեջանը կվնասի ԱՄՆ-ի հետ ունեցած հարաբերություններին, եթե Լեռնային Դարաբաղը ազատագրելու համար պատերազմ սկսի Հայաստանի դեմ: Դեսպանը ասել է, թե Ադրբեջանը ԱՄՆ-ի հետ եւ Հայաստանը Իրաքի հետ համեմատել չի կարելի: Ըստ նրա, ԱՄՆ-ը դեմ է Դարաբաղի հարցը ռազմական ճանապարհով լուծելուն եւ պատերազմի դեպքում կողմերից ոչ մեկին չի պատշաճանի: Համեմատություն անցկացնելով՝ Վիլսոնը նշել է, թե Իրաքը վտանգավոր երկիր է, որ քիմիական զենքերի մշակմամբ է զբաղվում, իսկ Հայաստանի հետ ունեցած Ադրբեջանի խնդիրը այլ հարթության վրա է: «Մենք ուզում ենք, որ այդ խնդիրը լուծվի խաղաղ ճանապարհով»,- նշել է Ռոս Վիլսոնը:

Շեւարդնաձեն ամերիկացիներին է հանձնում Վազիանիի օդանավակայանը

Թբիլիսիում չեն վախենում ոչ Հուսեյնից, ոչ էլ Պուտինից

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Թբիլիսի

«Վրաստանն ԱՄՆ-ին առաջարկել է Իրաքի դեմ պատերազմի ընթացքում Վազիանիի ռազմական օդանավակայանում տեղաբաշխել ամերիկյան մարտական ինքնաթիռները: ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի հետ հանդիպման ընթացքում պրն Շեւարդնաձեն խնդրել է Վազիանին երկար ժամանակով ամերիկյան զինուժի վերահսկողության եւ ներկայության տակ թողնելու հնարավորությունը, երբ ավարտվի Իրաքի դեմ պատերազմը: Էդ. Շեւարդնաձեն խնդրել է, որ Վաշինգտոնը ճնշումներ բանեցնի Ռուսաստանի վրա, եւ վրացական տարածքից դուրս բերվեն ռուս զինվորները», վկայակոչելով Պենտագոնի մի անանուն աղբյուր՝ երեկ հաղորդեց BBC ռադիոկայանը:

«Փետրվարի 10-ին նախագահ Շեւարդնաձեն ընդունել է սպառազինությունների վերահսկողության գծով ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ստեֆան Ռեդմեյրերին: Չեմ կարող ասել, թե ինչի մասին են զրուցել Շեւարդնաձեն եւ Ռեդմեյրը, հանդիպումը եղել է փակ: Այնպես որ, BBC-ի հաղորդագրությունը չեմ կարող հաստատել կամ հերքել», «Ազգի» հետ զրույցում ասաց նախագահ Շեւարդնաձեի մամուլի փոխխոսնակ Բոնդո Մձինարաշվիլին:

Շեւարդնաձե-Ռեդմեյրեր հանդիպման մասին հաղորդագրություն եղավ վրացական պաշտոնական մամուլում: Մասնավորապես, ամերիկացի դիվանագետը լրատվամիջոցներին ասել է. «Նախագահի հետ հանդիպման հիմնական թեման եղել է Եվրոպայում սովորական զինուժի պայմանագրի կատարման պարտավորությունների հարցը:

Տես էջ 5

ՀԱՄ Ն-ը կզբաղվի Ադրբեջանի սահմանների ուժեղացմամբ

ԲԱՔՈՒ, 14 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԱՄՆ կառավարությունը 907-րդ ուղղման գործողության կասեցման ժամկետի երկարացումից հետո մտադիր է Ադրբեջանի սահմանների ամրացման համար հատկացված միջոցները նպատակաուղղել հսկիչ սահմանագոտիների կարգավորմանը եւ սահմանային աշտարակների արդիականացմանը: Ադրբեջանի պետական սահմանապահ ծառայության տեղեկատվությամբ, այս տարվա օգնությունը կուղղվի անմիջականորեն սահմանային պահպանության ուժեղացմանը եւ տեխնիկական հնարավորությունների ընդլայնմանը: Ինչպես հիշեցնում է Բաքվի «525» թերթը, անցած տարի իբրեւ օգնություն հատկացված միջոցներով անցկացվել են ծովային սահմանների պահպանության զորախաղեր վեց նավերի եւ երկու սահմանապահ կատերների մասնակցությամբ, նավերում մոնտաժվել են տիեզերական կողմնացույցներ, ռադիոնավագնացական սարքավորում, ափերին ստեղծվել են դիտակետեր, կատարելագործվել են սահմանային պահպանության համակարգերը:

Ֆիզուլու շրջանում հայ զինվո՞ր է գերվել

ԲԱՔՈՒ, 14 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ադրբեջանական «Ենի Մուսավաթ» թերթը գրում է, թե Ֆիզուլու շրջանից տեղեկություն է ստացել, որ այդ շրջանի բնակիչներից մեկը իբր մի հայ զինվորի է կալանել եւ հանձնել տեղական զինվորական ստորաբաժանմանը: Ըստ թերթի, 20-ամյա Կուլիեւը հայ զինվորին նկատել է Ֆիզուլիի մոտակայքում: Վերջինս, իբր, փորձել է փախչել, սակայն ադրբեջանցի երիտասարդին հաջողվել է բռնել նրան: Հայ զինվորից առգրավել են մեծ քանակությամբ զենք ու դրամ:

ԳԵՐՄԱՆԻԱ

Լուսինե Մարգարյանի սպանության գործով կարեւոր վկան հարցաքննվել է

5000 եվրո պարգեւատրության բացահայտման համար

«Ազգի» ընթերցողները տեղեկացել են, որ Նյուրնբերգում, դեռեւս անհայտ հանգամանքներում, դիսկոտեկից դուրս գալուց հետո, նոյեմբերի 30-ի լույս դեկտեմբերի 1-ի գիշերը խեղդամահ է արվել Երեւանից ուսանելու նպատակով Գերմանիա եկած 33-ամյա Լուսինե Մերուժանի Մարգարյանը («Ազգ», 11.01 եւ 31.01.2003): Թերթի հիշյալ հրապարակումներին հավելենք վերջերս Բավարիայի քրեական ոստիկանության կողմից մեզ տրամադրած նոր լրատվությունը:

Վերջին տեղեկությունների համաձայն, քրեական ոստիկանության հետաքննումներով գտնվել է այս ոճրագործությանն առնչվող կարեւորագույն վկան՝ Ֆիլիպ Բիշիին (ում Ֆիլիպ են կոչում), որի հետ Լուսինեն նոյեմբեր 30-ի գիշերը եղել է Նյուրնբերգի դիսկոտեկում: Ըստ ենթադրությունների, Ֆիլիպը 28 տարեկան է, հասակը՝ 180 սմ, կարճ, սեւ, գանգուր մազերով Կոսովոյի ալբանցի: Գերմանիայում գտնվելն անօրինական է, փախստականի նրա հայցը մերժվել է, եւ այժմ արտաքսման նպատակով կալանքի տակ է: Ոճրագործության բացահայտմամբ շահագրգիռ մարմինները հարցաքննել են վկային՝ հույս ունենալով, թե դրանք լույս կսփռեն այս՝ դեռեւս մութ գործի մանրամասներին: Բավարիայի երկրամասային քրեական ոստիկանությունը 5000 եվրո դրամական պարգեւ է սահմանել վկաների այն ցուցմունքների համար, որոնք կնպաստեն ոճրագործության բացահայտմանը: Բավարիայի քրեական ոստիկանությունը փնտրում է այն մարդկանց, ովքեր այդ գիշեր կնոջը տեսել են քաղաքում կամ կենդանաբանական այգու մերձակայքում: Դեռեւս չեն գտնվել սեւ վերարկուն, սեւ կոշիկներն ու սպիտակ բլուզը, որ այդ երեկո կրում էր Լուսինեն:

Կարեւոր տեղեկություններ կարելի է հաղորդել ԳԴՀ-ում ոստիկանական ցանկացած ծառայակետի կամ տեղեկացնել Նյուրնբերգի քրեական ոստիկանությանը՝ 0911 211-3333 հեռախոսահամարով:

ԱՆԱՏԻՍ ՀՈՎՀԱՆԵՓՅԱՆ,
Գերմանիա

ԸՆԹԱՑԻԿ

ՔԱՐՈԶԱՐՇԱՎ

Այս 5 տարվա ընթացքում ես ջանացել եմ աղացուցել, որ երկիրն աղագա ունի

Հայաստանի քարտեզը միշտ իմ առջև է

Սկիզբը էջ 1

Աղեսի գոտում ու սահմանամերձ շրջաններում ավարտվել է դպրոցաշինության ծրագիրը, հերթը մյուս մարզերինն է: «Այս 5 տարվա ընթացքում ես ջանացել եմ աղացուցել, որ երկիրն աղագա ունի: Հենց որ մթնոլորտը մի քիչ փոխվեց, մարդիկ սկսեցին նաեւ լավ բաներից խոսել: Այնպես պիտի անենք, որ Հայաստանը դառնա տարածաշրջանում հարգված ու ընդունված երկիր: Իսկ դրա համար անհրաժեշտ է ժողովրդի վստահությունը վայելող լեգիտիմ իշխանություն», ասաց ՀՀ նախագահի թեկնածուն:

Ամբարիշտ ընտանիք ոչ ոք չի ուզում հյուր գնալ

Թալին քաղաքի ընդարձակ հրապարակում, ուր հավաքվել էին նաեւ հարակից գյուղերի բնակիչները, ընտրազանգվածի ներկայացուցիչներն արժեւորեցին նախ եւ առաջ նախագահի թեկնածուի՝ ռազմի մարտիկ լինելու իրողությունը: Արցախյան պատերազմի հենց սկզբից նա եղել է առաջին ջոկատներում, ընտանիքը մնացել է Ստեփանակերտում նույնիսկ այն ժամանակ, երբ քաղաքը գնդակոծվում էր: Բարդ տարածաշրջանում գտնվող Հայաստանին մշտապես սպառնում են արտաքին փոթորիկները: Հիմա էլ, ամերիկա-իրաքյան պատերազմի հավանականությունը խիստ իրական է, իսկ Իրաքը մեր քթի տակ է: «Մեզ պետք է մարտերում թրծված ռազմիկ գործիչ», համոզված են Սասունի, Վանի, Մուշի՝ եղեռնից մազապուրծ հետնորդների թոռներն ու ծոռները:

Այս մի քանի տարվա ընթացքում Թալինում էլ կյանքը փոխվել է: 2001 թ. հոկտեմբերից այստեղ գործում է «Դայմոնթեք» ադամանդի վերամշակման գործարանը, որը 600 աշխատող ունի, բայց նախատեսվում է եռապատկել այդ թիվը: 5 տարի առաջ Թալինի 38 գյուղեր խմելու ջուրը ցիստեռններով էին բերում, այժմ այդ պիտի ընդամենը 1 գյուղ է մնացել: Սակայն բարձր լեռնային Թալինը մյուս մարզերի նման լուծելիք շատ խնդիրներ ունի:

Իր խոսքում ՀՀ նախագահն անդրադարձավ նաեւ ներքաղաքական կայունության կարեւորության խնդրին: «Երբ մի ընտանիքում ամբարիշտ են, ոչ ոք չի ուզում հյուր գնալ: Այդպես էլ երկիրը, երբ համերաշխ ու խաղաղ չէ, ոչ ոք չի ուզում այդ երկրի հետ «ընկերություն» անել: Զբոսաշրջիկների հոսքն էլ է կտրվում, իսկ երբ երկիրը վստահություն է ներշնչում, դա նշանակում է թե՛ զբոսաշրջության աճ, թե՛ ներդրումների հոսք, ուրեմն եւ հարստացում», ասաց նախագահը:

Թերությունները շատ են, բայց ընտրված ուղղությունը ճիշտ է

Անցած մի քանի տարվա ընթացքում հարեւան՝ Շիրակի մարզի Արթիկ քաղաքում (որը հաջորդ այցելավայրն էր), կառուցվել է պոլիկլինիկա, 4 դպրոցներում առանձին ջեռուցման համակարգեր են ստեղծվել, կառուցվել է 6-րդ դպրոցի II մասնաշենքը: Այսօր Արթիկում երկրաշարժից տուժած ընդամենը 16 ընտանիք է մնացել անօթեւան: Կաթիսալ շինարարության ծավալները 2,5 անգամ ավելացել են, արդեն շահագործվում են 20 փոքր հանքեր: Աշխատանքի ու աշխատեղերի սղությունը դարձյալ մնում է իբրեւ ամենասուր հիմնախնդիր, բայց արթիկցիների մեծ մասը հավատում է, որ մուրճի ձայնը նորից զնգալու է իրենց քաղաքում:

Կեսօրից հետո ՀՀ նախագահի թեկնածուն հասցրեց հանդիպել նաեւ Շիրակի մարզի Սառնաղբյուր, Պեմզաշեն, Անուշավան, Փանիկ, Հոռոմ գյուղերի բնակիչների հետ:

«Զբաղվածության մակարդակն այլ բան է, աշխատատեղերը՝ այլ»

Նշեց ազգային վիճակագրական ծառայության պետը

Երեկ 2002 թ.-ի սոցիալ-տնտեսական վիճակի տարեկան ցուցանիշները ներկայացրեց Ազգային վիճակագրական ծառայության պետ Ստեփան Մնացականյանը: Անդրադառնալով 12,9 տոկոս համախառն ներքին արդյունքի աճին, նա նշեց, որ դա երկրի անկախության տարիներին գրանցված ամենաբարձր աճն է: Այնուհետեւ հիշատակվեցին արդյունաբերության ընդհանուր աճը 14 տոկոսով, արդյունաբերության աճն առանց էներգետիկայի՝ 24 տոկոսով, գյուղատնտեսության աճը՝ 4 տոկոսով եւ հատկապես շինարարության աճը 43 տոկոսով:

Ստեփան Մնացականյանը կարեւորեց արտաքին առեւտրաշրջանառության մեջ արձանագրված տեղաշարժը, մասնավորապես արտահանման ծավալների ավելացումը: Այն կազմել է 48 տոկոս, իսկ գումարային առումով արտահանումը հասել է 507 մլն դոլարի: Սրանով ազգային վիճակագրության ծառայության պետն ավարտեց իր խոսքը եւ պատասխանություն հայտնեց պատասխանելու լրագրողների հարցերին:

«Ազգի» հարցերը երկուսն էին: Առաջինն առնչվում էր մարդահամարի վերջնական տվյալներին, ինչի առնչությամբ նշվեց, որ ծառայության ամենամյա զեկույցի մեջ դրանք արձանագրված են: Մշտական բնակչության թվաքանակը կազմում է 3,2 մլն մարդ, առկա բնակչությանը՝ 3 մլն: Այսինքն՝ դրանք գրեթե անփոփոխ են նախնականի համեմատ:

Մեր երկրորդ հարցն Աղքատության հաղթահարման ամփոփ ծրագրում աղքատության վերացմանն ու եկամուտների անհավասարաչափ բաշխման ցուցանիշների հակասականությանն էր վերաբերում, ըստ որի աղքատությունը 2010 թ.-ին պետք է վերանա, իսկ այսպես կոչված Ջինի գործակիցը նվազի ընդամենը 0,05-ով: Ստեփան Մնացականյանը զերծ մնաց այդ կանխատեսումները մեկնաբանելուց: Նա ենթադրություն հայտնեց, որ կամ աղքատության վերացում ասելով նկատի է առնվել այսպես կոչված հացի խնդրի լուծումը, կամ այն, որ կապիտալի նախասկզբնական կուտակման գործընթացը դեռ չի ավարտվել: Այս խնդրին էր վերաբերում վերոնշյալ ծրագրում նվազագույն պարենային զամբյուղի չափը 12 հազ. դրամն ընդունելը, մինչդեռ առողջապահության նախարարության հաշվարկած նվազագույն պարենային զամբյուղը 26 հազարն է: Ինչո՞ւ է հիմք ընդունվել ոչ թե 26 հազար դրամը, այլ 12 հազարը: Այս հարցին վիճակագրության ծառայության պետը դարձյալ խուսափեց պատասխանելուց, ասելով, որ իրենք չեն ներկայացրել այդ թիվը, եւ ինքը չգիտի, թե ինչու է դա հիմք ընդունվել:

ՀՀ նախագահի թեկնածու Արտաշես Գեղամյանի կողմից մշտապես հիշատակվող այն պնդումը, թե վիճակագրության ծառայության տվյալներից երեւում է, որ աշխատատեղեր չեն ավելացել, Ստեփան Մնացականյանը հետեւյալ կերպ պարզաբանեց. «Զբաղվածությունը այլ բան է, աշխատատեղերը՝ այլ», նշեց նա, ավելացնելով, որ ձեռնարկությունների հաստիքացուցակը դեռեւս չի նշանակում, որ այդտեղ ընդգրկված մարդիկ աշխատում են: Երբ այս ցուցակները սկսում են մարվել, քանի որ ձեռնարկությունները սկսում են աշխատել, զբաղվածությունը նվազում է, իսկ աշխատատեղերի թիվն ավելանում:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ստի վալեսի ու յուր թեկնածուի բառաչանխերին ի պատասխան

«Իրավունքի» խմբագիր Հովհաննես Գալաջյանը յուր թերթի վերջին համարի զարմանքի անկյունում վիրավորական մտքեր էր արտահայտել ՀՌԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանի եւ նրա ղեկավարած կուսակցության հասցեին, որին ի պատասխան ՀՌԱԿ փոխատենապետ Հարություն Առաքելյանն ասաց.

- Այդ թերաթի մոտ բնավորություն է դարձել անտեղի վիրավորել կուսակցությանը եւ ատենապետին: Երկար ժամանակ չենք պատասխանել, որպեսզի չընկնենք նրանց հարթության վրա: Բայց, արի ու տես, ստի վալեսը եւ իր կուսակցությունը, որը միշտ դառի վեցնոցի տեղ են անցկացրել եւ՝ Սամվել Բաբայանը, եւ թլոշ ներկայիս նախագահացուն, իրար «դուխ» տալով, իրենց թվում է, թե, հեսա, վախեցանք:

Այ, «քաղաքական» թլոշների եւ ընդհանրապես արտասավորների հավատածուներ, հերիք չէ՞ խառնեք ժողովրդին իրար, թե՞ ձեզ թվում է ժողովուրդը ինչ-որ խայծ է կուլ տալու ու շտիռն Օնիկին ձայն է տալու...

Իսկ ինչ վերաբերում է լիդերիդ, ասեմ, ամենեզիան խեղդել է: Կհարցնես ինչո՞ւ, ասեմ. եթե Ռամկավար Ազատական կուսակցությունն ու իր լիդերն այդքան վատն էին, ինչի՞ համար էր Հրանտը 1999 թ. Աժ ընտրություններին, ՀՌԱԿ գրասենյակում նստած, երեք ժամ համոզում էր, որ ՀՌԱԿ-ը, ՍԻՄ-ը եւ Գեղամյանն իրար հետ բլոկով գնային Աժ: է, չգնացինք, չծախվեցինք, ժողովրդից գոփած Սյամոյի փողերից չբլացանք, որովհետեւ այնպիսի պատմություն ենք ժառանգել, որի գնահատականը դուք ու տարբեր տրամաչափի ԱԼՄ-ական գրպանահատները չպիտի տաք, պիտի դեռ մարդավարի ու հայավարի խոսել սովորեք, ինչքան էլ փող տան շտիռն օնիկները, չծախվել սովորեք:

Ու էդ խելքով էլ ուզում եք ազգին առաջնորդել: Ինչ վերաբերում է ընտրություններին մեր ստացած տոկոսներին, մի դրեք ձեզ գժի տեղ: Մենք ոչ այդ թվերին ենք հավատում, ոչ էլ Հրանտ Խաչատրյանի ստացած 0,1 տոկոսին:

Այցելություն զորամասեր

Հանրապետության հեռավոր շրջաններում տեղակայված զորամասեր այցելելու նպատակով պաշտպանության նախարարությունը տրամադրել է ավտոբուսներ, որոնք կմեկնեն փետրվարի 28-ին, ժամը 12.00-ին կենտրոնական հավաքակայանից:

ՀՀ ՊՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Նամակ թեկնածուներին ամենաթեժ պահին

Նախագահական ընտրություններից ընդամենը 4 օր առաջ հայրենիք-սփյուռք համագործակցությունը համակարգող կոմիտեն բաց նամակով դիմում է ՀՀ նախագահի թեկնածուներին՝ խնդրելով հրապարակավ հայտնել իրենց դիրքորոշումը «Հայոց ազգային միասնության» ծրագրի հիմնադրույթների իրականացման վերաբերյալ: Դրանք են՝ ՀՀ կառավարության կազմում հիմնել Հայաստան-սփյուռք համագործակցությունը համակարգող նախարարություն, ստեղծել համայնքային ներկայացուցչական կառույցներ, հրավիրել Հայաստան-սփյուռք ազգային խորհրդարան (համահայկական խորհրդարան), սփյուռքի համայնքային ներկայացուցչական կառույցներին կից ստեղծել Հայաստան-սփյուռք հիմնադրամի մասնաճյուղեր եւ հիմնել «Համահայկական բանկ» բաց բաժնետիրական ընկերությունը, որն իր մասնաճյուղերը կստեղծի աշխարհի հայաբնակ երկրներում: Բանկն իր շահույթի 10-15 տոկոսը պետք է նվիրաբերի «Հայրենիք-սփյուռք» հիմնադրամին, որն էլ մասնաճյուղերի միջոցով կիրագործի խորհրդարանի ընդունած ծրագրերը: Այս կապակցությամբ հայրենիք-սփյուռք համագործակցությունը համակարգող կոմիտեի եւ հիմնադրամի նախագահ Հրաչ Տեր-Եսայանը, մշակութային եւ ստեղծագործական կազմակերպությունների նախագահ Դավիթ Ղազարյանը եւ աշխատակազմի ղեկավար Վազգեն Չոգինյանը երեկ ժուռնալիստների միությունում ասուլիս էին հրավիրել:

Կոմիտեի նախագահը նախ տեղեկացրեց, որ իրենց կառույցում ընդգրկված են 20-ից ավելի քաղաքական եւ 150-ից ավելի պետական ու հասարակական կազմակերպություններ: Չեւավորվել է 13 խորհուրդ, որոնցից յուրաքանչյուրը մշակում է առանձին բնագավառի ծրագրեր եւ ներկայացնում պետական եւ հասարակական տարբեր այցելություններին: Մինչ օրս կոմիտեին աջակցել է գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանը: 2002 թ. հոկտեմբերից կոմիտեն դիմել է նաեւ քաղաքական մի շարք կուսակցություններին, որոնցից մի քանիսի առաջադրած նախագահի թեկնածուներից որեւէ արձագանք դեռեւս չի ստացել:

«Ազգի» թղթակցի հարցին, թե նախագահի թեկնածուներին ուղղված նամակն ուշ չի՞ ներկայացվում, կոմիտեի ղեկավարը պատասխանեց, որ երկու օրն էլ բավական է թեկնածուների պատասխանների համար:

Մեր տպավորությամբ, փոքր-ինչ չափազանցված են կոմիտեի սպասելիքները քարոզարշավի թոհուբոհի վերջին օրերին գլուխները կորցրած թեկնածուներից: Գուցե վերջիններս շատերն արձագանքել եւ պարտավորվեն իրականացնել վերոհիշյալ հիմնադրույթները կոմիտեի կոչից դրդվա՞ծ, ձայներ ստանալու նպատակո՞վ:

Ասուլիսում ծավալվեց բանավեճ, քանի որ կոմիտեի առաջարկած հիմնադրույթներն արդեն քննարկվել են Հայաստան-սփյուռք երկրորդ խորհրդաժողովում, սակայն դրանք իրականացնելու համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ, որի ձեռք բերման հնարավորության մասին նրանք դժվարացան պատասխանել:

Իսկ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի ղեկավարությամբ այս տարվա հոկտեմբերին ստեղծվելիք համահայկական կազմակերպության հիմնադիր ժողովի մասին կոմիտեի ղեկավարները նույնիսկ տեղյակ չէին:

Հուսանք, որ նրանք չեն քվեարկի հոգուս պարտավորվող, սակայն ծրագրեր չիրականացնող թեկնածուի:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Խմբագրատան հեռ. 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՈՍՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Ընթացիկ

Ընտրական գործընթացների մոնիտորինգն ըստ տեղական դիտորդական կազմակերպության

«Ընտրությունը ոնն է» հասարակական կազմակերպությունը երեկ լրագրողներին ներկայացրեց 2003 թ.-ի նախագահական ընտրությունների երկարաժամկետ դիտորդական իր ուսումնասիրությունների հաշվետվությունը:

Քվեարկության օրը կազմակերպության դիտարկումները կանցկացվեն հանրապետության 700 ընտրատեղամասերում: Իսկ 2002 թ. նոյեմբերից կազմակերպությունը ծեռնարկել է նախագահական ընտրությունների երկարաժամկետ դիտարկումը՝ թեկնածուների առաջադրման եւ գրանցման, սոցիալական ոլորտի, պատգամավորական անձանց գործունեության, ԶԼՄ-ների լուսաբանումների եւ պատգամավորական քարոզարշավի կտրվածքով:

«Ընտրությունը ոնն է» կազմակերպությունն իր դիտարկումների ընթացքում մշտադիտարկ է համարել մի շարք փաստեր: Թեկնածուների գրանցման խնդրում, ըստ կազմակերպության, կիրառվել են երկակի չափանիշներ: Միեւնույն պահանջների դեմքում չի գրանցվել Ռաֆֆի Հովհաննիսյանը, գրանցվել են Ռոբերտ Քոչարյանը եւ Արամ Կարապետյանը: Ըստ կազմակերպության, խախտվել են նաեւ Ընտրական օրենսգրքով քարոզարշավի համար սահմանված ժամկետները: Մասնավորապես, մինչեւ պատգամավորական քարոզարշավը մի շարք հեռուստաընկերությունների եթերում ցուցադրվել են քարոզարշավային բնույթի տեսահոլովակներ (Ռոբերտ Քոչարյանի օգտին), հարցազրույցներ (Արամ Կարապետյան), հեղինակային հաղորդումներ (Արամ Կարապետյան), տեսաֆիլմ (Վազգեն Մանուկյան) եւ այլն:

Գործադիր իշխանությունների եւ պետական ռեսուրսների ներգրավումն ընտրական գործընթացներում եւ քարոզարշավում դիտորդական կազմակերպությունը նույնպես համարում է մշտադիտարկ սկսած ստորագրահավաքից: Ըստ կազմակերպության հաշվետվության, քարոզարշավին միջամտելու առումով պատգամավորական լծակները գործածվել են կառավարության մի շարք անդամների կողմից: Հասկանալի է, որ հիմնականում նման մեղադրանքը հասցեագրված է գործող նախագահին: «Ընտրությունը ոնն է» ՀԿ-ն ափսոսանք է հայտնում, որ ներկայումս ոչ մի միջազգային դիտորդական կամ տեղական կազմակերպություն չի զբաղվում թեկնածուների քարոզարշավի ֆինանսավորման մոնիտորինգով, ինչը կարող է կանխել որոշ թեկնածուների պետական ռեսուրսների օգտագործումը քարոզչության նպատակով:

Հասկանալի մտահոգություն է հայտնվում նաեւ քարոզարշավի խոչընդոտման փաստերի, մասնավորապես Արտաշատի դեպքերի, այս կամ այն կուսակցության գրասենյակներում խուլիգանական արարքների կատարմամբ: Ընտրելու իրավունք ունեցող զինծառայողների շրջանում քարոզարշավի խոչընդոտումը կազմակերպությունը համարում է մտահոգիչ, քանի որ զինծառայողներն իրավունք ունեն մասնակցելու ընտրություններին, ինչպես նաեւ՝ լիարժեք իրազեկվելու թեկնածուների մասին:

Անդրադառնալով զանգվածային լրատվամիջոցներին եւ դրանց կողմից քարոզարշավների լուսաբանմանը, նշվեց, որ դիտարկվել են 6 հեռուստաընկերությունների, 11 տպագիր լրատվամիջոցների եւ հանրային ռադիոյի անդրադարձերն ընտրագործընթացներին: Ըստ այդմ, հունվարի 21-31-ի կտրվածքով ԶԼՄ-ների կողմից չի պահպանվել օբյեկտիվությունը: Ինչպես նաեւ, ըստ կազմակերպության, լայնորեն գործարկվել է թաքնված գովազդը, լուսաբանումներում եղել են արժանապատվություն վիրավորող արտահայտություններ ու ակնարկներ:

Մտահոգիչ փաստերի շարքը կազմակերպությունը շարունակում է ընտրական հանձնաժողովների կազմավորման անհամաչափության (ինչը համապատասխանում է օրենսդրությանը), քարոզարշավին օտարերկրյա հաղորդակցման միջամտության, ընտրացուցակային անճշտությունների մասին տեղեկություններով:

Մոնիտորինգի հիման վրա կազմակերպությունը եզրակացրել է, որ ընտրացուցակների ճշգրտման առումով առաջընթաց կա: Դրական է նաեւ այն, որ ուսուցանված եւ ակտիվ են գործում ԿԸՀ-ն եւ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները, ինչը չի կարելի ասել տեղամասային հանձնաժողովների մասին: Նշելով, որ ստեղծված իրավիճակը խարխլում է ընտրողների վստահությունն ընտրությունների հանդեպ, կազմակերպությունը կոչ է անում ընտրական գործընթացի մասնակիցներին այսուհետեւ չկրկնել անցած բացասականը եւ ընտրությունների ընթացքը համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին:

Հետաքրքրական է, որ թերեւս վերջին օրերի ընթացքում անցկացված մոնիտորինգների համեմատությամբ «Ընտրությունը ոնն է» կազմակերպությունն իր տեսադաշտից դուրս չի թողել ոչ որեւէ թեկնածուի, ոչ էլ որեւէ ԶԼՄ-ի: Եվ ցավոք, դիտորդական կազմակերպությունները իրենց հաշվետվության հիման վրա չեն կարող բողոքարկել արձանագրված ընտրախախտումները:

Կազմակերպությունը քվեարկության օրվա դիտարկումից հետո՝ փետրվարի 21-ին հանդես կգա նախնական հայտարարությամբ:

ԱՂԱՎՆԻ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Քաղաքագետները չեն բացառում նախագահական ընտրությունների 2-րդ փուլ

«Նախագահական ընտրությունների քարոզարշավը վերածվել է գյուղական հարսանիքների՝ սեղաններ, կենացներ: Մենք, փաստորեն, չունենք քաղաքական կուլտուրա»: Նախագահական ընտրարշավում տեղ գտնող սխալների, բացերի մասին խոսելիս երեկ Մամուլի ազգային ակումբում նշեց քաղաքագետ Սուրեն Զոլյանը:

Թեկնածուներն իրենք, ըստ պրն Զոլյանի, կոպիտ սխալներ թույլ չեն տվել: Նրա համոզմամբ, թեկնածուների մեծ մասն այս ընտրապայքարում լուծում է խորհրդարանում տեղ ունենալու խնդիրը: «Եվ այս առումով նրանք ընտրարշավը կարող են հաջողված համարել, քանի որ որոշակի վարկանիշ իրենց համար ապահովեցին»:

Ս. Զոլյանը նշեց նաեւ, որ պայքարն ընթանում է ոչ թե գաղափարների շուրջ, այլ անձերի միջեւ:

ՄԱԿ-ի մյուս հյուրը՝ քաղաքագետ Հմայակ Հովհաննիսյանն էլ, ընդհակառակը, համոզված էր, որ պայքարը գաղափարական ոլորտում է: «Արտաշես Գեղամյանն անցյալ 12 տարիներին չի մասնակցել երկրի քայքայման գործընթացներին: Եվ, ի տարբերություն մյուս թեկնածուների, առաջարկում է այլընտրանքային տարբերակ»: Սա էր պրն Հովհաննիսյանի հիմնավորումը:

Պրն Հովհաննիսյանը վստահ է նաեւ, թե գործող նախագահի թիմն ասպիսնաբար համոզվում է, որ ընտրությունների երկրորդ փուլն անխուսափելի է: «Արտաշես Գեղամյան-Սերժ Սարգսյան հեռուստատեսային բանավեճը գործող նախագահի թիմի առաջին քայլն էր՝ պարզելու, թե ում հետ առավել հարմար կլինի անցկացնել երկրորդ փուլը: Իսկ իշխանական ռեսուրսները կարող են կարգավորել նաեւ երկրորդ փուլ անցնող երկրորդ թեկնածուի ընտրության հարցը»: Երկրորդ թեկնածուի մյուս տարբերակն էլ, ըստ Հ. Հովհաննիսյանի, Ստեփան Դեմիրճյանն է:

Սուրեն Զոլյանը նշեց, թե համոզված չէ, որ կլինի ընտրությունների երկրորդ փուլ, բայց նաեւ չի բացառում: «Այնուամենայնիվ, արդեն այն հանգամանքը, որ մենք լրջորեն քննարկում ենք ընտրությունների միջոցով իշխանափոխության հարցը, խոսում է մեր երկրում ժողովրդավարական նորմերի առաջընթացի մասին: Եվ այստեղ կա նաեւ գործող նախագահի ներդրումը»:

Լ. Գ.

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

ՀՀԾ-ն բացահայտ չի պատշաճում Ստեփան Դեմիրճյանին, որպեսզի չվարկաբեկի նրան

«Եթե լինեն օրինական ընտրություններ, դրանք կավարտվեն առաջին փուլով եւ Ստեփան Դեմիրճյանի հաղթանակով», երեկ լրագրողներին վստահեցրեց ՀՀԾ վարչության նախագահ Արարատ Զուրաբյանը: Սակայն ՀՀԾ վարչության եւ հանրապետական խորհրդի փետրվարի 13-ի նիստը եզրափակվել է հայտարարությամբ, համաձայն որի նախագահական ընտրություններում կուսակցությունը չի պատշաճի կոնկրետ թեկնածուի: ՀՀԾ-ի համար ընդունելի կլինի ցանկացած թեկնածուի ընտրությունը, որն ունի տասը տարվա ՀՀ քաղաքացիություն եւ երկրում տասը տարվա մշտական բնակություն:

Եվ այնուամենայնիվ, թեկնածուների ողջ շարքից Ա. Զուրաբյանը նախընտրեց խոսել Ստեփան Դեմիրճյանի մասին: Ըստ ՀՀԾ ղեկավարի, վերջինիս ընտրվելու հավանականությունն ամենամեծն է, քանզի նա համաժողովրդական սեր է վայելում: «Նման հավաքներ, նման վերաբերմունք կար 1990-92 թթ. մեր հանդեպ: Բայց հետագա տարիներին ես նման երեւույթ առհասարակ չեմ հիշում»:

ՀՀԾ-ն դրական է գնահատում Ստեփան Դեմիրճյանի շրջադասը, որն, ի տարբերություն հայաստանյան իրականության մեջ ընդունված ձեւի, պատեհապաշտորեն չի հեռացել նրանից՝ գործնական նպատակահարմարությանը տուրք տալով:

Ըստ Ա. Զուրաբյանի, անտեղի են նաեւ Ս. Դեմիրճյանի՝ փորձի պակաս ունենալու վերաբերյալ տեսակետները, քանի որ թեկնածուն, լինելով պարզապես Կարեն Դեմիրճյանի որդին, ողջ կյանքի ընթացքում է կուտակել քաղաքական այդ փորձը: «Սակայն խիստ կասկածում եմ, որ ընդդիմությունը կարողանա վերահսկել ընտրությունների արդյունքները, քանզի այսօրվա իշխանությունները ղեկին մնալու այլ ճանապարհ չունեն, քան ընտրակեղծիքները»:

«Իսկ եթե Ռոբերտ Քոչարյանը վերընտրվի արդար ընտրությունների արդյունքում, կաշխատե՞ք նրա հետ», լրագրողների հարցին Ա. Զուրաբյանը պատասխանեց, թե անգամ այդ տարբերակը ընդունելի կլինի, չնայած տասը տարվա քաղաքացիության պահանջին չբավարարելու խնդրին:

Իսկ կմասնակցի՞ ՀՀԾ-ն խորհրդարանական ընտրություններին: Կմասնակցի՞ անտարակույս, ե՛ւ մեծամասնական, ե՛ւ համամասնական կարգով:

Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ այդ խնդրի համաձայնեցման մասին հարցին էլ Ա. Զուրաբյանը պատասխանեց. «Լեւոն Տեր-Պետրոսյանը ՀՀԾ շարքային անդամ է, եւ մենք մեր գործողությունները չենք համաձայնեցնում նրա հետ՝ անկախ նրանից, թե որքան ենք հարգում այդ գործչին»:

Ամեն դեպքում Արարատ Զուրաբյանը վստահեցրեց, թե այսուհետեւ կուսակցությունն առավելագույնս ակտիվանալու եւ մասնակցելու է բոլոր քաղաքական գործընթացներին:

ԼԻԼԻԹ ԳԲԻԳՈՐՅԱՆ

«Ստի ոտքը կարճ է»

Հանրահայտ այս ճշմարտության հետ ընդհանրապես հավի չեն նստում հանրապետության որոշ լրատվամիջոցներ: Դա շատ բնական է, քանի որ վերջիններս չեն ճանաչում ոչ չափ, ոչ սահման, ոչ էլ բարոյական որեւէ նորմ: Իսկ լրագրողական էթիկայի մասին խոսելն արդեն իսկ ավելորդ է: Դրանք սոսկ հագուրդ են տալիս սենսացիա սարքելու անզուսպ կրքերին: Ու շատ հաճախ հիվանդագին երեւակայությունից սառնասիրտ դաժանություն է ծնվում: Վկան՝ «Առավոտ» եւ «Հայկական ժամանակ» թերթերի փետրվարի 14-ի համարներում տպագրված սենսացիոն գլուխգործոցներն են՝ կապված Հենրիկ Հովհաննիսյանի հետ: Մարդը կենդանի է, բայց նրան այն աշխարհ են ուղարկում:

Այո, Արտաշատի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն Հենրիկ Հովհաննիսյանի հետ փետրվարի 12-ին դժբախտ պատահար է տեղի ունեցել: Եվ դա նրա անհանգիստ բնավորության պատճառով: Արտաշատում Հենրիկին գիտեն ոչ միայն իբրեւ մարզի մշակույթի բնագավառի նվիրյալներից մեկի, այլեւ՝ չափից դուրս բարեխիղճ ու պարտաճանաչ մարդու: Մարդ, որը սիրում է իր ձեռքով անել ամեն ինչ: Շարախնդալու, չսուզված ու անպատկառ սուտ տպագրելուց առաջ թուղթ սեւացնողները թող բարի լինեին այցելել «Էրեբունի» բժշկական կենտրոն, ուր հենց դեպքից անմիջապես հետո տեղափոխվել է Հենրիկը: Վնասվել է նրա այտոսկրը, եւ վիրահատական միջամտություն է պահանջվում: Շնորհակալություն «Էրեբունի» բժշկական կենտրոնի բուժանձնակազմին՝ մեր համախոհացու նկատմամբ դրսեւորած ուշադրության եւ հոգատարության համար: Հենրիկը մարզի եւ քաղաքի ղեկավարների, բոլոր ընկերների ու մտերիմների ուշադրության կենտրոնում է: Նա կարիքավոր եւ անձամբ պատիվ կրահանջի սահող լուրի հեղինակներից:

Չգիտես ինչու, Արտաշատն աչքի գերան է դարձել առանձին լրատվամիջոցների համար: Նրանք միտումնավոր սեւացնում են մարզի եւ մարզկենտրոնի հետ կապված ցանկացած փաստ եւ իրադարձություն: Հասկանալի է, պիտի ծանակման փորձ արվեր Տյառնընդառաջին նվիրված տոնական արարողությանը: Իհարկե, դրան կարելի էր վերաբերվել քամահրանքով, եթե չարամտորեն չշոշափվեր Հենրիկ Հովհաննիսյանի անունը:

Ավելի լավ չես ասի, քան ասել է Շոթա Ռուսթավելին. «Շատ մարդու համար վատ լուր իմանալուց ավելի հաճելի սփոփանք չկա»: Ուզում ենք հավատալ, որ «դեղին մամուլի» «աճպարարները» կատարելապես են սփոփվել: Պարզապես մի խորհուրդ նրանց. խաղաղվեք, ի սեր Աստծո: Հանգիստ թողեք Արտաշատն ու արտաշատցուն: Փորձեք սանձել ձեր մոլուցքը: Այսպես անխղճաբար շաղ մի տվեք թույն ու չարություն: Բա որ հանկարծ, ով գիտի, սղառվեք: Ախր առջեւում խորհրդարանական ընտրություններ են:

ՄԱՐԳԱՐԻՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
«Արտաշատ» թերթի խմբագիր

Ձերբակալված է... իր իրավունքները պաշտպանելու համար

Մեր ընթերցողները ծանոթ են գործարար Հակոբ Ճարոյանին, որն իր ձեռնարկատիրական գործունեությունից ավելի շատ զբաղված է տարբեր պետական պաշտոնյաների կողմից պարբերաբար ոտնահարվող իր եւ ուրիշների իրավունքները պաշտպանելով: Հակոբ Ճարոյանը բացառիկ անձ է նաեւ այն առումով, որ մեծ հաջողությամբ է պաշտպանում իր իրավունքները եւ քաջատեղյակ է օրենսդրական դաշտին: Նա տարբեր դատական գործեր է շահել «Ջրմուղ-կոյուղու», էլեկտրացանցի տեղական մասնաճյուղերից, պետական գույքի կառավարման նախարարությունից: Այս ամենը լուսաբանել է մեր թերթը: Ինքը՝ Հակոբ Ճարոյանը, «Ազգում» պարբերաբար հանդես է եկել հրապարակումներով, որտեղ բացահայտել է իր նկատմամբ կատարված աղտոտությունները: Մեր օրաթերթի 2002 թ. հոկտեմբերի 18-ի հրապարակման մեջ Հակոբ Ճարոյանը հանգամանորեն ներկայացրել էր օրենքի այն բազմաթիվ խախտումները, որ իր նկատմամբ անհիմն քրեական գործ հարուցելով իրականացրել էր Գեղարքունիքի մարզի դատախազի ավագ օգնական Հովսեփ Սարգսյանը: Դրանից հետո քրեական գործը հանձնարարում են մեկ այլ քննիչի, որն էլ ավարտին է հասցնում աղտոտությունների շղթան՝ հետախուզում հայտարարում եւ ձերբակալում է Հակոբ Ճարոյանին:

Բողոքելով այս ամենի դեմ, Հակոբ Ճարոյանը հունվարի 30-ից մինչ օրս հացադուլի մեջ է, որը շարունակելը նրա առողջության համար ծանր հետեւանքների կբերի: Աղտոտիչի ձերբակալված մեր թերթի հոդվածագրի պահանջն այն է, որ դատախազությունը հիմնավորի իր նկատմամբ քրեական գործ հարուցելու օրինականությունը, հիմնավորի, որ Հովսեփ Սարգսյանը պաշտոնական դիրքն ի չարս չի գործադրել եւ քրեական գործ հարուցելու համար բավարար հիմք է ունեցել: Մինչ այժմ Ճարոյանի բազմաթիվ դիմումներին դատախազությունը չի պատասխանել:

Հակոբ Ճարոյանը համոզված է, որ բաց դատավարության դեպքում ինքը կարացուցի, որ իր դեմ հարուցված գործը փուչիկ է: Սակայն առայժմ նա մեկուսարանում է:

Մենք շարունակելու ենք հետեւել այս գործի ընթացքին եւ ձգտելու ենք հասնել օրինականության հաստատմանը: Կոչ ենք անում մարդու իրավունքների պաշտպանությամբ մտահոգված բոլոր անձանց եւ կազմակերպություններին եւս հետեւել այս գործին:

Ա. Մ.

ԱԶԳ

Դիտարկումներ

Նախընտրական ժամանակահատվածում մշտապես ափսոսանում են սոցիոլոգները: Հասարակական տրամադրությունների ճշման մեկ այլ կարևոր գործոն՝ հոգեբանական հեշտազոտությունները, որոնք կանոն, անտեսվում են: Այս պահին էլ ընտրազանգվածի ու թեկնածուների վերաբերյալ որևէ վերլուծություն չի արվում: Դրսի աչխարհում ճակատագրական նման շրջափուլերին հոգեբանների հսկա բանակ է մասնակցում: Հոգեկան առողջության կենտրոնի տնօրեն, հոգեբան Խաչատուր Գասպարյանի հետ մեր զույգը մասնակի փորձ է դիտարկելու նախագահական քարոզարշավի հոգեբանական դիմագիծը:

Նախընտրական այս ժամանակաընթացքը արտակարգ իրավիճակ է հասարակության համար: Հասունանում են բացասական ու դրական լիցքերի կուտակումներ: Ինչի՞ կարող են հանգել դրանք:

- Շրջադարձային փոփոխությունների շեմին առավելագույնս արվում են հասարակական հույզերը, դրանք սովորաբար պայթյունավտանգ են եւ մեծ խոցելիություն են ենթադրում հենց իր ընտրազանգվածի համար: Որքան մարդիկ կարող են ակտիվանալ, նույնիսկ դիմել ագրեսիայի, նույնչափ էլ նրանք կարող են ընկճվել եւ հոգեբանական մեծ կորուստներ կրել: Հոգեբանները նկատել են, որ այս ամբողջ թոհուբոհի մեջ մարդկանց մի մասը նաեւ անձնային խնդիրների լուծման մեջ է հայտնվում: Հատկապես նրանք, ովքեր կյանքում չեն կարողացել իրենց հավակնություններին համարժեք կայանալ ու ինքնադրսեւորվել, պարտության դեմքում (եթե իր ընտրած թեկնածուն պարտվի) հուսալքության ու անարդարության սուր զգացումներ կարող են առաջանալ: Քանի որ երեւույթը անձնականացվում է, դիտարկվում իբրեւ սեփական անհաջողություն, յուրատեսակ ինքնախաբեություն առաջացնում:

Մյուս կողմից, քարոզարշավի ընթացքն ընտրողների մեծ մասի համար նաեւ դրական լիցք է, քանի որ նրանք իրենց անձի գնահատականը բարձրացնելու հնարավորություն են ստանում: Այն, որ իրենցից է կախված երկրի ապագան: Եվ եթե սխալվեն ընտրության մեջ, պատժվելու են նաեւ երկարատեւ մեղքի զգացումով: Այդ դրական լիցքերի առկայությամբ է բացատրվում նաեւ այն փաստը, որ ընտրազանգվածի մի մասը նույն հյուրընկալությամբ է ընդունում բոլոր թեկնածուներին:

- Թեկնածուների մեծ մասն ակնհայտորեն ի սկզբանե ընտրվելու շանս չունի: Սակայն նրանք էլ ներկայացրել են իրենց թեկնածությունը, նրա՞նք էլ ինքնախաբեության զոհեր են:

- Այս դեպքում շարժառիթները խիստ տարբերություն են լինում: Գուցե դա մեկի համար սկիզբ է, եւ ծախսերը կարեւոր չեն, քանի որ հետագայում կարող է ասել, որ նախագահի թեկնածու է եղել: Մեկ ուրիշն իսկապես հավատում է, որ ինքը հստակ ծրագիր ունի, որնք ժողովրդի համար բարենպաստ են: Երրորդ դեպքում դա ընդամենն առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու քայլ է: Այս պարագայում յուրաքանչյուր թեկնածուի պետք է վերլուծել առանձին-առանձին, նրա անձնային որակների եւ իրական քաղաքական կշռի ենթատեքստում: Դա չափազանց հետաքրքրական է, քանի որ կարելի է պարզել, որ որեւէ մեկն, օրինակ, իշխելու, երբեմն հիվանդագին հակումներ ունի, որոնք ուզում է իրականացնել: Այս դեպքում երեւույթը վտանգավոր է, չնայած պատմությունը ցույց է տալիս, որ համաշխարհային շատ լիդերներ պսիխոպատ հատկանիշներ են ունեցել:

- Քարոզարշավին հոգեբանների մասնակցությունը կարո՞ղ է էական փոփոխություններ ենթադրել:

- Դա անհրաժեշտ է հատկապես թեկնածուների համար, որոնք երբեմն այնպիսի կոպիտ սխալներ են թույլ տալիս, որոնք չէին լինի, եթե հոգեբանի աջակցություն լիներ: Օրինակ, քարոզարշավին վերաբերող հոլովակները: Եթեր բաց թողնելուց առաջ այդ նյութերը հոգեբանի մասնակցությամբ պետք է զտվեին՝ պարզելու, թե արդյոք այս կամ այն կադրերը կբարձրացնե՞ն թեկնածուի հեղինակությունը, թե՞ հակառակը՝ կնսեմացնեն նրան:

Ես, մասնավորապես, տեղյակ եմ, որ Ամերիկայում եւ Անգլիայում կառավարական բարձրաստիճան պաշտոնյաների կողքին գործում են հոգեբանական ծառայություններ: Նրանց նույնիսկ խորհուրդ են տալիս, թե այս կամ այն միտքն արտահայտելիս ինչ բառով սկսեն նախադասությունը, որ ավելի հավատալի լինի: Բացի այդ, մեր թեկնածուները հենց իրենք հայտնվել են հոգեբանական ծանր կացության մեջ, որը մեծ լարվածություն է պահանջում, եւ նրանք կարող են հայտնվել աֆեկտի վիճակում:

Եվ դա ընտրազանգվածն իր տեսանկյունով է ընկալում ու թարգմանում: Հոգեբանության մեջ մի այսպիսի հասկացություն կա՝ մարմնի լեզու՝ ձեռքի շարժումները, դիմախաղը: Մեր ոչ մի թեկնածուի շարժուձեւի, լեզվի կուլտուրան հղկված չէ: Դա նշանակում է, որ նրանք ընտրողի ենթագիտակցությանն ակամա կարող են բացասական ազդակներ ուղարկել: Խոսքն ամենագլխավորը չէ, մարդկանց միջեւ անգիտակցական հաղորդակցում կա նաեւ շարժուձեւի, լեզվի միջոցով:

- Քարոզարշավի ընթացքում ակտիվանում են նաեւ մասնակիցների ագրեսիվ տրամադրությունները:

- Դա այս ընթացքի պայթյունավտանգության գրավականներից է: Ուսումնասիրությունները պարզել են, որ անհատի հոգեբանությունը խիստ տարբերվում է ամբոխի հոգեբանությունից: Ամբոխը շատ ավելի մեծ էմոցիա ունի: Եվ եթե լիդերներից մեկը նրան ուղղորդի որեւէ քայլի, շատ ավելի հավանական է, որ համաձայնություն ստանա, քան եթե դիմեր 2 կամ 3 մարդու: Այդ առումով ամբոխն ավելի կառավարելի է: Իսկ պայթյունը կանխել եւ հնարավոր է, եւ ոչ: Գերհուզական վիճակը բացառելու նախնական, պրոֆիլակտիկ քայլեր կան, որոնք հետագայում գոնե կոսմետիկ հարաբերություններ են առաջանում:

- Թեկնածուների մեծ մասը գործում է հավանական հակառակորդին դատափետելու սկզբունքով:

- Եթե ավելի ուշադիր լինենք, կնկատենք, որ նման մարտավարության դիմում են այն մարդիկ, ովքեր պակաս ինքնավստահ են կամ ունեն մեղքի զգացումներ: Հոգեբանները նկատել են, որ մեղադրելը սեփական մեղքի զգացումի ծանրաչափ է: Ինչքան շատ ենք ուրիշներին մեղադրում, այնքան շատ ենք մեղավոր եւ ինքներս մեզ արդարացնելու պահանջ զգում:

Այսօր իրենց փրկիչ են համարում նրանք, ովքեր ավելի շատ փրկության կարիք ունեն: Գործում է հոգեբանական պրոյեկցիայի օրենքը, թերեւս նրանք ուզում են սեփական եսը փրկել: Դա նաեւ պաշտպանական հակազդեցություն է: Ես կարծում եմ, որ թե ընդդիմադիրները, թե հենց գործող նախագահն ինքը, բոլորն էլ փրկության կարիք ունեն, նախագահն էլ իբրեւ փրկիչ է հանդես գալու: Հոգեբանական այս իրադրության մեջ, երբ ժողովուրդն իրեն զգում է զոհի կարգավիճակում, փրկչի հայտնությունը ժամանակի այս պահի հրամայականն է: Եվ եթե ընտրողին ուղղված խոսքի մեջ չլինի փրկչի հայեցակարգը, նա թեկնածուին չի վստահի: Չպետք է մոռանալ, որ ընտրազանգվածի զգալի մեծամասնությունը չկայացավ այս կյանքի համար:

Այսօր բոլորը մեղավորներ են փնտրում ամենատարբեր հարցերի վերաբերյալ: «Ո՞վ է մեղավորը»-ը դարձել է ժամանակի ամենակարեւոր հարցը: Մենք դեռ ընտրությունների մասնակցության մշակված կուլտուրա եւ հստակ վերաբերմունք չունենք: Ցավոք, այնպիսի ընտրություններ եղան, երբ վերջիվերջո պարզեցինք, որ դրանք անարդար են եղել: Եվ դա ավելի է ուժեղացնում անվստահության զգացումը, որովհետեւ ընտրողն արդեն մեկ անգամ խաբված է եղել: Մաղթենք, որ այս անգամ ժողովուրդը հուսախաբ չլինի:

ԳԱՐԻԼԵ ՉԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստանում նախընտրական վարքագծի մշակույթ դեռ չի ձեւավորվել

- Նախընտրական այս ժամանակաընթացքը արտակարգ իրավիճակ է հասարակության համար: Հասունանում են բացասական ու դրական լիցքերի կուտակումներ: Ինչի՞ կարող են հանգել դրանք:

- Շրջադարձային փոփոխությունների շեմին առավելագույնս արվում են հասարակական հույզերը, դրանք սովորաբար պայթյունավտանգ են եւ մեծ խոցելիություն են ենթադրում հենց իր ընտրազանգվածի համար: Որքան մարդիկ կարող են ակտիվանալ, նույնիսկ դիմել ագրեսիայի, նույնչափ էլ նրանք կարող են ընկճվել եւ հոգեբանական մեծ կորուստներ կրել: Հոգեբանները նկատել են, որ այս ամբողջ թոհուբոհի մեջ մարդկանց մի մասը նաեւ անձնային խնդիրների լուծման մեջ է հայտնվում: Հատկապես նրանք, ովքեր կյանքում չեն կարողացել իրենց հավակնություններին համարժեք կայանալ ու ինքնադրսեւորվել, պարտության դեմքում (եթե իր ընտրած թեկնածուն պարտվի) հուսալքության ու անարդարության սուր զգացումներ կարող են առաջանալ: Քանի որ երեւույթը անձնականացվում է, դիտարկվում իբրեւ սեփական անհաջողություն, յուրատեսակ ինքնախաբեություն առաջացնում:

Մյուս կողմից, քարոզարշավի ընթացքն ընտրողների մեծ մասի համար նաեւ դրական լիցք է, քանի որ նրանք իրենց անձի գնահատականը բարձրացնելու հնարավորություն են ստանում: Այն, որ իրենցից է կախված երկրի ապագան: Եվ եթե սխալվեն ընտրության մեջ, պատժվելու են նաեւ երկարատեւ մեղքի զգացումով: Այդ դրական լիցքերի առկայությամբ է բացատրվում նաեւ այն փաստը, որ ընտրազանգվածի մի մասը նույն հյուրընկալությամբ է ընդունում բոլոր թեկնածուներին:

- Թեկնածուների մեծ մասն ակնհայտորեն ի սկզբանե ընտրվելու շանս չունի: Սակայն նրանք էլ ներկայացրել են իրենց թեկնածությունը, նրա՞նք էլ ինքնախաբեության զոհեր են:

- Այս դեպքում շարժառիթները խիստ տարբերություն են լինում: Գուցե դա մեկի համար սկիզբ է, եւ ծախսերը կարեւոր չեն, քանի որ հետագայում կարող է ասել, որ նախագահի թեկնածու է եղել: Մեկ ուրիշն իսկապես հավատում է, որ ինքը հստակ ծրագիր ունի, որնք ժողովրդի համար բարենպաստ են: Երրորդ դեպքում դա ընդամենն առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու քայլ է: Այս պարագայում յուրաքանչյուր թեկնածուի պետք է վերլուծել առանձին-առանձին, նրա անձնային որակների եւ իրական քաղաքական կշռի ենթատեքստում: Դա չափազանց հետաքրքրական է, քանի որ կարելի է պարզել, որ որեւէ մեկն, օրինակ, իշխելու, երբեմն հիվանդագին հակումներ ունի, որնք ուզում է իրականացնել: Այս դեպքում երեւույթը վտանգավոր է, չնայած պատմությունը ցույց է տալիս, որ համաշխարհային շատ լիդերներ պսիխոպատ հատկանիշներ են ունեցել:

- Քարոզարշավին հոգեբանների մասնակցությունը կարո՞ղ է էական փոփոխություններ ենթադրել:

- Դա անհրաժեշտ է հատկապես թեկնածուների համար, որոնք երբեմն այնպիսի կոպիտ սխալներ են թույլ տալիս, որոնք չէին լինի, եթե հոգեբանի աջակցություն լիներ: Օրինակ, քարոզարշավին վերաբերող հոլովակները: Եթեր բաց թողնելուց առաջ այդ նյութերը հոգեբանի մասնակցությամբ պետք է զտվեին՝ պարզելու, թե արդյոք այս կամ այն կադրերը կբարձրացնե՞ն թեկնածուի հեղինակությունը, թե՞ հակառակը՝ կնսեմացնեն նրան:

Ես, մասնավորապես, տեղյակ եմ, որ Ամերիկայում եւ Անգլիայում կառավարական բարձրաստիճան պաշտոնյաների կողքին գործում են հոգեբանական ծառայություններ: Նրանց նույնիսկ խորհուրդ են տալիս, թե այս կամ այն միտքն արտահայտելիս ինչ բառով սկսեն նախադասությունը, որ ավելի հավատալի լինի: Բացի այդ, մեր թեկնածուները հենց իրենք հայտնվել են հոգեբանական ծանր կացության մեջ, որը մեծ լարվածություն է պահանջում, եւ նրանք կարող են հայտնվել աֆեկտի վիճակում:

Եվ դա ընտրազանգվածն իր տեսանկյունով է ընկալում ու թարգմանում: Հոգեբանության մեջ մի այսպիսի հասկացություն կա՝ մարմնի լեզու՝ ձեռքի շարժումները, դիմախաղը: Մեր ոչ մի թեկնածուի շարժուձեւի, լեզվի կուլտուրան հղկված չէ: Դա նշանակում է, որ նրանք ընտրողի ենթագիտակցությանն ակամա կարող են բացասական ազդակներ ուղարկել: Խոսքն ամենագլխավորը չէ, մարդկանց միջեւ անգիտակցական հաղորդակցում կա նաեւ շարժուձեւի, լեզվի միջոցով:

- Քարոզարշավի ընթացքում ակտիվանում են նաեւ մասնակիցների ագրեսիվ տրամադրությունները:

- Դա այս ընթացքի պայթյունավտանգության գրավականներից է: Ուսումնասիրությունները պարզել են, որ անհատի հոգեբանությունը խիստ տարբերվում է ամբոխի հոգեբանությունից: Ամբոխը շատ ավելի մեծ էմոցիա ունի: Եվ եթե լիդերներից մեկը նրան ուղղորդի որեւէ քայլի, շատ ավելի հավանական է, որ համաձայնություն ստանա, քան եթե դիմեր 2 կամ 3 մարդու: Այդ առումով ամբոխն ավելի կառավարելի է: Իսկ պայթյունը կանխել եւ հնարավոր է, եւ ոչ: Գերհուզական վիճակը բացառելու նախնական, պրոֆիլակտիկ քայլեր կան, որոնք հետագայում գոնե կոսմետիկ հարաբերություններ են առաջանում:

- Թեկնածուների մեծ մասը գործում է հավանական հակառակորդին դատափետելու սկզբունքով:

- Եթե ավելի ուշադիր լինենք, կնկատենք, որ նման մարտավարության դիմում են այն մարդիկ, ովքեր պակաս ինքնավստահ են կամ ունեն մեղքի զգացումներ: Հոգեբանները նկատել են, որ մեղադրելը սեփական մեղքի զգացումի ծանրաչափ է: Ինչքան շատ ենք ուրիշներին մեղադրում, այնքան շատ ենք մեղավոր եւ ինքներս մեզ արդարացնելու պահանջ զգում:

Այսօր իրենց փրկիչ են համարում նրանք, ովքեր ավելի շատ փրկության կարիք ունեն: Գործում է հոգեբանական պրոյեկցիայի օրենքը, թերեւս նրանք ուզում են սեփական եսը փրկել: Դա նաեւ պաշտպանական հակազդեցություն է: Ես կարծում եմ, որ թե ընդդիմադիրները, թե հենց գործող նախագահն ինքը, բոլորն էլ փրկության կարիք ունեն, նախագահն էլ իբրեւ փրկիչ է հանդես գալու: Հոգեբանական այս իրադրության մեջ, երբ ժողովուրդն իրեն զգում է զոհի կարգավիճակում, փրկչի հայտնությունը ժամանակի այս պահի հրամայականն է: Եվ եթե ընտրողին ուղղված խոսքի մեջ չլինի փրկչի հայեցակարգը, նա թեկնածուին չի վստահի: Չպետք է մոռանալ, որ ընտրազանգվածի զգալի մեծամասնությունը չկայացավ այս կյանքի համար:

Այսօր բոլորը մեղավորներ են փնտրում ամենատարբեր հարցերի վերաբերյալ: «Ո՞վ է մեղավորը»-ը դարձել է ժամանակի ամենակարեւոր հարցը: Մենք դեռ ընտրությունների մասնակցության մշակված կուլտուրա եւ հստակ վերաբերմունք չունենք: Ցավոք, այնպիսի ընտրություններ եղան, երբ վերջիվերջո պարզեցինք, որ դրանք անարդար են եղել: Եվ դա ավելի է ուժեղացնում անվստահության զգացումը, որովհետեւ ընտրողն արդեն մեկ անգամ խաբված է եղել: Մաղթենք, որ այս անգամ ժողովուրդը հուսախաբ չլինի:

ԳԱՐԻԼԵ ՉԱՆԻԵԼՅԱՆ

Սամայի բալան

Անսահման հեզ ու երդվյալ խոնարհ Ստեփանիչը մեկ-մեկ կարող էր նաեւ ընդվզել, մանավանդ երբ որդիների եւ միանուագար կնոջ ներկայությամբ. «Մայրիկ, ախր օգոստոսն է, տաք գուլպաներ ինչո՞ւ հագնեմ»: Տիկին Ռոզան կարմրատակում էր, զայրանում: Հազիվ կուլ տալով՝ «էդ կինդ է լեզու դնում ատամներիդ տակը», մեղմորեն արտաբերում էր. «Ոչինչ, այսօր էլ հագիր, վաղվանից չես հագնի»: Կես հաղթանակը երբեմ պարտություն չէ: Եվ Ստեփանիչն ինքնագոհ խրվում էր բազմոցի մեջ՝ ավարտելու հերթական խաչբառը:

Նույն հեզ ու խոնարհ Ստեփանիչը հանկարծ դարձավ վճռական, անզիջող, պահանջատեր. «Մենք պահանջում ենք բաղաթեի հրաժարականը»: Դժվար էր վերծանել «մենք»-ը: Շրջապատը սկզբում անտարբեր էր. «Տղա է, սիրտն ելած է, մայրն այստեղ չէ, կգա, ականջները կծգի»: Ի՞նչ իմանային, որ մայրն է թելադրել իր կամքը: Մարդիկ սկսեցին հետաքրքրվել. «Ինչո՞ւ է հրաժարական պահանջում»: Պատասխանը մի պահ տպավորիչ է. «Հայրս նրա մեղքով ավտոբարի զոհ դարձավ»: Իսկ ավտոբարը վաղուց էր տեղի ունեցել...

Ծանոթների մի մասն անմիջապես դառնում էր համախոհ՝ զոհի կերպարը միշտ կարեկցանք է առաջացնում: Հայրն, իրոք, ազդեցիկ մարդ էր, նախկինում բարձր աթոռներ էր մաքել: Որոշ ժամանակ խորն ընդհատակ էր անցել՝ կիսալեգալ-կիսաանլեգալ բիզնեսով էր զբաղվում, փող աշխատում: Փոխվեցին ժամանակները: Կարելի էր ջրի երես դուրս գալ: Եվ դուրս եկավ: Փառասիրությունը հանգիստ չէր տալիս: Պահը հարմար էր, կարելի էր բաղաթեն դառնալ: Փաքի Աստծո, ոչ մի ցենզ չի պահանջվում. տառաճանաչ լինելն է բավարար: Միայն պետք է ճիշտ գործել, աղմկոտ թիմ հավաքել, փքանոց խոսքեր ցինել, պատգամների ցուցակ կազմել՝ բաղի էլեկտրիկ, հարկահավաք, սրճարանի, խաղատան տարածք...

Շատերն էին նրան մոռացել: Հիշողության մեջ վերականգնելու տեխնոլոգիային հաջողակ էր՝ աղմուկով մտնել ասպարեզ: «Շուխուռ» դնողների պակաս չկար: Ոչ էլ՝ փողի: Անլեգալ աշխատած հսկայական գումարներ կային: Մի մասը կարելի էր նպատակային ծախսել: Եվ սկսվեց անմեղ գառնուկների ողբը. նախկան որեւէ բակ մտնելը «ինչ-որ անծանոթ» հենց շենքի մուտքի մոտ գառնուկ էր զոհաբերում Սարգիսիչի ոտքերի տակ: է, ո՞վ կհրաժարվի խաչլամայից, «Սաթերավի» գինուց: Օրը մի գառնուկ զոհաբերելն աննշան ծախս էր. ընդամենը 10-15 գառնուկ: Փոխարենը հարյուրավոր ձայներ: Ճիշտ է, բաղաթեն չդարձավ, բայց երեւալու ծրագիրը կատարվեց: Թաղի բնակիչների հիշողության մեջ ամրագնդվելու նպատակով որոշ ժամանակ էլ աշխատեց որպես «ընտրակեղծիքների զոհ»: Այդ աշխատանքում ընդգրկեց մինչ այդ բաղին գրեթե անծանոթ 50-ամյա բալիկին. «Թող երեւա, վաղն էլ ինքը կուզենա բաղաթեն լինել» հեռանկարը կարելի էր ընչավորել:

50-ամյա բալան տնօրեն է աշխատում... իր տեղակալի մոտ. ողջ օրը խրված էր խաչբառերի հաղթահարման մեջ: Տեղակալն էր փորձում կարգի գցել խաչբառով արտադրությունը կազմակերպելու տնօրենի անբանության հետեւանքները:

Ողբերգական ավտոբարը ծանր հարված էր անբան որդու եւ բոունցք մայրիկի համար: Ամենափչացած ժամացույցն օրը երկու անգամ ամենայն ճշգրտությամբ հայտնում է ճիշտ ժամը: Իսկ բալան այդ ունակությունն էլ չուներ: Հոգեհանգիստ-յոթ-քառասունը շուտ անցավ: Խաչբառ լուծելով ընտանիք չես պահի, ջրի երեսին երկար չես մնա: Իսկ ինչո՞ւ չօգտագործել տպավորիչ պատրվակը. «Ողբերգությունը՝ ավտոբարը պատվիրած է»: Թեպետ վարորդն ընդունել էր իր մեղքը. «Մենակ եմ եղել ղեկին»:

Որպես զոհ աշխատելու տպավորիչ հոգեբանական հիմքը ստեղծվեց: «Թաղաթեից դժգոհները (բոլորին կարո՞ղ է դուր գալ...) ցեմենտեցին այդ հիմքը: Եվ սաղրիչ լուրը բերնեբերան տարածվեց: Հանդիպելիս ճանապարհը զիջում էին՝ զոհի բալան նույնպես զոհ է: Կարելի էր առաջ գնալ. «Ո՞վ է պատվիրատուն» հարցի պատասխանը թողնվում էր բաղին. դե, ամեն մեկն ունի իր հակակրանքը: Եվ պատվիրատուների թիվն ամեն օր ավելանում էր: Թաղային, բակային, շենքային ֆնանարկումները ֆիլտրում էին մանր ու միջակ կրքերից բուսած կասկածները: Ստեփանիչն իր թիմով ուշ-ուշով հետեւում էր բամբասանքների ընթացքին: Երբ պատվիրատուի վարկածի մասին բամբասանքները դաժանորեն սպառվում էին, Ռոզա մայրիկը հուշեց բալային. «Կպիր միկրոֆոնին»: Եվ կպավ. «Պահանջում եմ բաղաթեի հրաժարականը»: Ճիշտ է, չի ասում, թե բաղաթեն է ավտոբարի պատվիրատուն: Ինչ փույթ. եթե 50-ամյա բալան պահանջում է որեւէ մեկի, մանավանդ բաղաթեի հրաժարականը, ուրեմն նկատի ունի նրան: Մանավանդ, որ բաղաթեը շատերին է մերժել աթոռների ավտոնանակ կառուցելու եւ այլ հարցերում:

- Եթե համոզված ես, որ բաղաթեն է կազմակերպել հայրիկիդ սպանությունը, վրեժ լուծիր,- ասում էին նրան:

- Ոչ, ես պետք է սահմանադրական եղանակով հասնեմ նրա պատասխանատվությանը,- փորձում էր համոզել Ստեփանիչը:

«Ասվածավախ մարդ է», «Համարձակություն չունի արյան վրեժի դիմելու», «Թասիբի պակաս ունի» եւ նման գնահատականները զուգահեռաբար ներծծվում էին բաղի բնակիչների հոգում:

«Սահմանադրական եղանակո՞վ են կազմակերպել ավտոբարը, որ սահմանադրական եղանակով է ցանկանում պատասխանատու անել», «Եթե համայնքապետը պատանի է հարազատ հորը, վրիժառու որդին պատասխանատվությա՞մբ է հագուրդ տալիս անափ վրեժին», «Պատասխանատուները փոխհատուցո՞ւմ է սպանությունը», անպատասխան հարցերը խոցանգում էին շատերին:

Ստեփանիչը սկսեց ինքնուրույն մտածել, վերլուծել: Եվ առանց մայրիկի որոշեց, որ պահը շատ է հարմար իրական նպատակը հրապարակելու համար. «Ե՛ս պետք է դառնամ բաղաթեն»:

Մարդիկ զգացին, որ Ստեփանիչն իրենց օգտագործում է անձնական վրեժ լուծելու եւ աթոռ գրավելու համար: Հիասթափությունն անվերադարձ է:

ՊՈՒՇԿԻՆ ՍԵՐՈԲՅԱՆ

Հավատամքի խոսք չկողմնորոշվածներին

Ահա հինգ տարվա խաղաղությունից հետո քաղաքական դաշտն ու ժողովուրդը հայտնվեցին մի փակ դռան առաջ, որը շատ է պարտավորեցնող, թե ում ձեռքին է բանալին... Ով է առաջինը ներս մտնելու եւ վարելու հինգ տարվա տիրույթը, ով է լինելու այն նախագահը, ով երկիրը պիտի տանի զարգացման խաղաղ ճանապարհով, առանց ցնցումների եւ արժանապատվորեն:

Ժողովուրդն այսօր ուշադիր հետեւում է նախագահական ամեն մի թեկնածուի քաղաքական «ընչառությանը», նրա արարքին ու խոսքին:

Ընտրարշավի այս կարճ վազքատարածքում ամեն մեկը յուրովի եւ մեկը մյուսից ավելի պատկերավոր ու հոետորական չափազանցված ձիրքերով համոզում է իր «ճշմարտացիությունն» ու «եզակիությունը»: Ա՛յ կայն մի բան չեն գիտակցում, որ ժողովուրդը չի մոլորվի նրանց քաղցրածոր խոսք ու խոստումից:

Որբերտ Քոչարյանն իր իշխանության շրջանում ապացուցեց, որ հինգ տարվա իր աշխատանքն արդյունավետ էր... Քաղաքի անխնամ տեսքը փոխվեց, աղետի գոտին վերակառուցվեց, թունելների եւ կամուրջների շինարարությունը դարձավ գերխնդիր, Արցախը չգնաց պատերազմի եւ էլի... էլի շատ բաներ...

Իսկ մյուս թեկնածուները գուցեեւ ունեն արժանիքներ, բայց պիտի սկսեն հենց սկզբից, եւ մինչեւ իրենց շուրջը նայեն, կգլորվի ժամանակը, որն այնքան թանկ ու ճակատագրական է Հայաստանի համար...

Ես իմ ձայնը վստահաբար տալով Որբերտ Քոչարյանին՝ կոչ եմ անում բոլորին, նրանց, ովքեր տարակուսում են կամ դեռ երկընտրանքի մեջ են.

- Տվեք ձեր վստահության քվեն Որբերտ Քոչարյանին, որովհետեւ առկա են նրա քաղաքական նպատակաուղղվածությունը, ժողովրդի խաղաղ ու անվտանգ կեցության իրավական երաշխիքը հանդիսացող նրա կամքի ուժը, շիտակությունը, երկրի ու ժողովրդի առջեւ ծառացած խնդիրները լուծելու նրա վճռականությունը, համայն հայ ժողովրդի ստեղծագործ ներուժի ու միասնության նրա հավատամքը, որը հիմք կհանդիսանա զգալի դրական տեղաշարժերի Հայաստանի տնտեսության մեջ, հետեւաբար սոցիալական ոլորտում:

ՍԱՄՎԵԼ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Իրավաբան

Միջազգային

Հունվարի 23-ին հեռուստակամրջային մամուլի ասուլիսում ադրբեջանական ընդդիմադիր «Ազգային անկախություն» կուսակցության վարչության անդամ Մրոֆ. Նազիմ Մուզաֆֆարլին ի պատասխան մեր հարցի ասել էր. «Ղարաբաղյան հակամարտությանն ԱՄՆ-ի մոտեցումները միանգամայն համընկնում են Ադրբեջանի մոտեցումներին: ԱՄՆ-ը ճանաչում է Ադրբեջանի տարածային ամբողջականությունը, ուստի մեր շահերին չի հակասում նաեւ նրա դիրքորոշումը»: Այնուհետեւ նա, նկատի ունենալով «Զերկալո» թերթի ֆնադատությունները, ասել էր, որ մի թերթ կարող է ֆնադատել ԱՄՆ-ին, մյուսը՝ գովերգել:

Մինչդեռ ադրբեջանցի կուսակցական գործչին ուղղված հարցը պայմանավորված էր ոչ թե թերթային ֆնադատություններով, այլ ԵԱՀԿ Մինսկի խմբում ամերիկացի եռանախագահող Ռուդոլֆ Փերինայի դեկտեմբերի 11-ի հայտարարությամբ. «Միջազգային հանրությունը պատրաստ չէ ճանաչելու ոչ Հարավային Օսիայի, ոչ Աբխազիայի, ոչ էլ Մերձդնեստրի անկախությունը: Լեռնային Ղարաբաղի խնդիրը փորձ է այլ է»:

Այլ կերպ, հարցը թերթերը չէին, այլ ԱՄՆ-ի դիրքորոշումից բխող դժգոհությունը: Այլապես, Ղարաբաղի հակամարտության հարցով նախագահ Հեյդար Ալիեւի անձնական ներկայացուցիչ Արազ Ազիմովը Փերինայի հայտարարությունը «ոչ կոռեկտ» չէր բնութագրի: Ոչ էլ ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը 2000 թիվն ամփոփելիս հարկ կհամարեր ընդգծել. «Մեր վարած քաղաքականությունը փոխել է միջազգային հանրության մոտեցումը ԼՂ խնդրին»:

Եթե Ազիմովը, արձագանքելով Փերինայի հայտարարությանը, հիմնավորում է ԱՄՆ-ի նկատմամբ պաշտոնական Բաքվի դժգոհությունը, ապա փետրվարի 13-ի համարում «Զերկալոն» «Մեզ նույնիսկ Վրաստանի եւ Մոլդովայի հետ նույն շարքում չեն դասում» հոդվածով հաստատում է Օսկանյանի իրավացիությունը:

Հոդվածը նվիրված է Ֆրանսիայի ու Ռուսաստանի նախագահների հանդիպմանը, որը փետրվարի 10-ին տեղի էր ունեցել Փարիզում: **«Ազգը»** տեղեկացրել էր, որ Շիրակ-Պուտին հանդիպմանը արծարծվել է նաեւ ղարաբաղյան հիմնահարցը: «Զերկալոն» իր հերթին տեղեկացնում է հանդիպման ավարտին կազմակերպված մամուլի համատեղ ասուլիսի մասին, արձանագրելով. «Շիրակն ասաց, որ ղարաբաղյան վերջիններս անկախության ճանաչման առումով Լեռնային Ղարաբաղը տարբերակում են ինչպես Աբխազիայից, այնպես էլ Մերձդնեստրից:

«Զերկալոն» դժգոհություն է հայտնում, որ միջազգային ուժերը Չեչնիայի հարցում ելնում են Ռուսաստանի տարածային ամբողջականության սկզբունքից, իսկ Ղարաբաղի հարցում հիմք են ընդունում Հայաստանի եւ Ադրբեջանի փոխհամաձայնությունը, որը նշանակում է, որ հակամարտությունը կարգավորելիս կարելի է շրջանցել Ադրբեջանի տարածային ամբողջականությունը: «Ուշադրության է արժանի այն

«Ադրբեջանի հետ ոչ ոք հաշվի չի նստում»

Փաստում է ադրբեջանական «Զերկալո» թերթը

թյունները, ասել էր, որ մի թերթ կարող է ֆնադատել ԱՄՆ-ին, մյուսը՝ գովերգել:

Մինչդեռ ադրբեջանցի կուսակցական գործչին ուղղված հարցը պայմանավորված էր ոչ թե թերթային ֆնադատություններով, այլ ԵԱՀԿ Մինսկի խմբում ամերիկացի եռանախագահող Ռուդոլֆ Փերինայի դեկտեմբերի 11-ի հայտարարությամբ. «Միջազգային հանրությունը պատրաստ չէ ճանաչելու ոչ Հարավային Օսիայի, ոչ Աբխազիայի, ոչ էլ Մերձդնեստրի անկախությունը: Լեռնային Ղարաբաղի խնդիրը փորձ է այլ է»:

Այլ կերպ, հարցը թերթերը չէին, այլ ԱՄՆ-ի դիրքորոշումից բխող դժգոհությունը: Այլապես, Ղարաբաղի հակամարտության հարցով նախագահ Հեյդար Ալիեւի անձնական ներկայացուցիչ Արազ Ազիմովը Փերինայի հայտարարությունը «ոչ կոռեկտ» չէր բնութագրի: Ոչ էլ ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը 2000 թիվն ամփոփելիս հարկ կհամարեր ընդգծել. «Մեր վարած քաղաքականությունը փոխել է միջազգային հանրության մոտեցումը ԼՂ խնդրին»:

Եթե Ազիմովը, արձագանքելով Փերինայի հայտարարությանը, հիմնավորում է ԱՄՆ-ի նկատմամբ պաշտոնական Բաքվի դժգոհությունը, ապա փետրվարի 13-ի համարում «Զերկալոն» հակամարտությունը պետք է լուծվի Հայաստանի եւ Ադրբեջանի փոխհամաձայնությամբ: Ուշագրավ է, որ Ֆրանսիայի նախագահը հակամարտության առնչությամբ չէր հիշատակում Ադրբեջանի տարածային ամբողջականությունը: Չհիշատակեց նաեւ Վլադիմիր Պուտինը: Ռուսաստանի եւ Ֆրանսիայի դիրքորոշումների նույնությունը խոսում է հիմնախնդրի առնչությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի երկու համանախագահների դիրքորոշումների համընկնման մասին, որը չի կարող չանհանգստացնել Բաքվին»:

«Զերկալոն» մատնանշում է, որ Մինսկի խմբի երրորդ համանախագահող երկրի՝ ԱՄՆ-ի դիրքորոշումը համահունչ է Պուտինի հետ հանդիպմանը Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի արտահայտած դիրքորոշմանը, ավելացնելով. «Ընդսմին, միջազգային այլ հարցերում, ինչպիսին Իրաքինն է, Ֆրանսիան եւ ԱՄՆ-ը տրամագծորեն հակադիր դիրքորում են որդեգրել: Եվ Վաշինգտոնը հայտարարում է, թե Ֆրանսիան այլեւս ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի դաշնակիցը չէ»:

Այնուհետեւ ադրբեջանական թերթը հիշեցնում է ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ-ի եռանախագահ Փերինայի վերոհիշյալ հայտարարությունը, դա համեմատում է Ժակ Շիրակի դիրքորոշման հետ եւ հանգում այն եզրակացության, որ երկու դեպքում էլ փաստը, գրում է թերթը, որ աշխարհի առաջատար երկրների ղարաբաղյան հիմնախնդրին մոտեցումն արմատապես տարբերվում է նրանց համանման խնդիրներին մոտեցումից, ինչն Ադրբեջանի օգտին չէ»:

Այս ամենի հիմքի վրա «Զերկալոն» հանգում է հետեւյալ եզրակացության. «Ադրբեջանի հետ ոչ ոք հաշվի չի նստում: Մեզ նույնիսկ նույն շարքում չեն դասում Վրաստանի եւ Մոլդովայի հետ: Վերջին շրջանում մեր արեւմտյան բարեկամները նախանձելի հաճախականությամբ ակնարկում են, որ ղարաբաղյան հիմնահարցին կարելի է Ադրբեջանի տարածային ամբողջականությունից անկախ լուծում գտնել: Եթե նման ակնարկները սովորական են դառնում, դա նշանակում է, որ միջազգային ասպարեզում Ադրբեջանի միջազգային դիրքերը շատ թույլ են»:

Ադրբեջանի դիրքերի թուլացումը համազոր է Հայաստանի միջազգային դիրքերի ամրապնդմանը: Մնում է, որ այս իրողության հետ հաշվեն գործող նախագահի մրցակիցները, եւ նրա վրա հարձակումներ գործելիս գոնե զերծ մնան այնպիսի շահարկումներից, ինչպիսիք են Հայաստանի այսպես կոչված մեկուսացումը, ղարաբաղյան հիմնահարցը եւ Մեղրիի միջանցքը:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Շեւարդնաձեն ամերիկացիներին է հանձնում Վազիանիի օդանավակայանը

Սկիզբը՝ էջ 1

Այդ պայմանագիրը կարող է իրագործվել միայն այն դեպքում, եթե Ռուսաստանը կատարի 1999 թ. Սամբուլի գագաթաժողովի որոշումները: Պրն Շեւարդնաձեին ասացի, որ այդ հարցում Ռուսաստանի հետ բանակցություններում ԱՄՆ-ը լիովին աջակցում է Վրաստանին»:

Համաձայն ԵԱՀԿ Սամբուլի գագաթաժողովի, Մոսկվան պարտավորվել է Վրաստանի տարածից դուրս բերել Ախալքալաքի 62-րդ եւ Բաթումի 12-րդ ռուսական ռազմակայանները: Ամերիկացիների ֆինանսական օգնությամբ 2001 թ. ռուսները հեռացան Վազիանիից, ապա թուրքերն ամերիկացիների ֆինանսական օգնությամբ օդանավակայանը վերանորոգեցին, վերազինեցին: Թեեւ ԱՄՆ-ը պատրաստ է ֆինանսավորել, որպեսզի ռուսները հեռանան նաեւ Ախալքալաքից եւ Բաթումից, Կրեմլը չի շտապում եւ Վրաստանում իր ռազմական ներկայությունը պահպանելու համար պահանջում է հավելյալ առնվազն յոթ տարի ժամանակ: Ռուս զինվորների հեռանալուն դեմ են նաեւ Աջարիայի առաջնորդ Ասլան Աբաշիձեն եւ Ախալքալաքի բնակիչները:

Վերջին օրերին հերթական անգամ լարվել են ռուս-վրացական հարաբերությունները: Նախագահ Շեւարդնաձեն հայտարարեց, որ Իրաքի դեմ պատերազմում լիովին եւ բացահայտ պաշտպանում է Բուշին: ՌԴ պաշտպանության նախարար Իվանովը Թբիլիսիին ամբաստանեց Պանկիսի կիրճում գրոհայինների դեմ ոչ պատշաճ պայքար մղելու մեջ, իսկ ռուսական մամուլը ձեռնարկեց հերթական տեղեկատվական պատերազմը:

Քաղաքագետ Գիա Նոդիան **«Ազգի»** հետ զրույցում նշեց, որ հակաիրաքյան արշավին մաս կազմելու եւ ամերիկացիներին ռազմակայաններ տրամադրելու էդ. Շեւարդնաձեի պատրաստակամությունը պետք է դիտել Ռուսաստանի կողմից Վրաստանին պարբերաբար ճնշելու ենթատեքստում՝ «Փաստորեն Մոսկվան Վրաստանին անկյունել է»:

Հարցին, թե «մտավախություն չկա", որ Իրաքի դեմ պատերազմի օրերին Ռուսաստանը կօգտվի հնարավորությունից եւ կանխարգելիչ հարվածներ կհասցնի Պանկիսի կիրճին», պրն Նոդիան պատասխանեց. «Իրոք նման մտավախություն կա, բայց այդ մտավախությունը Վրաստանին ավելի է մղում դեպի ԱՄՆ»:

«Կանխարգելիչ հարվածներ հասցնելու մասին խոսք չի կարող լինել, քանի որ Պանկիսում չկան գրոհայիններ: Մենք Ռուսաստանից չենք վախենում, քանի որ միջազգային հանրությունն այնպիսին չէ այսօր, ինչպիսին էր 2001 թ.», ասաց էդ. Շեւարդնաձեի մամուլի փոխխոսնակ Մծինարաշվիլին:

2001 թ. Ռուսաստանը ռմբահարել էր Վրաստանի Պանկիսի կիրճը: Այդ օրերին նախագահ Շեւարդնաձեն հայտարարեց, որ հնարավորության դեպքում հաճույքով կպատժեր ռուսներին:

Փետրվարի 10-ին նախագահ Շեւարդնաձեի հետ փակ հանդիպման ավարտին ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ռեդմեյերը լրագրողներին ասել է. «Իրաքի ճգնաժամի շուրջ ԱՄՆ քաղաքական ուղեգիծը լիովին պաշտպանելու մասին շատ լուրջ հայտարարություն է արել Վրաստանի նախագահը: ԱՄՆ վարչակազմը Վրաստանի կողմից այլ վերաբերմունք չէր ակնկալում: ԱՄՆ վարչակազմի անունից երախտագիտություն եմ հայտնում պրն Շեւարդնաձեին: Բուշի կառավարությունը մեծ նշանակություն է տալիս Վրաստանի աշխարհաքաղաքական դիրքին»:

«Վրաստանի նախագահը վերջին օրերին մեկ անգամ չէ, որ հայտարարել է, թե Իրաքի հարցում լիովին աջակցում է ԱՄՆ վարչակազմին: Զանգվածային բնաջնջման զենքեր արտադրող Իրաքի վարչակազմը պետք է պատժվի», մեզ հետ զրույցում ասաց Բոնդո Մծինարաշվիլին:

ՀԱՅԿԱՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ

6 կոնգրեսականներ դատի տվեցին Ջորջ Բուշին

Կոնգրեսի 6 անդամներ մի քանի զինծառայողների եւ զինվորների մայրերի հետ հինգշաբթի օրը դատի են տվել նախագահ Ջորջ Բուշին՝ Իրաքի պատերազմը կանխելու նպատակով: Հայցվորները մտադիր են պատերազմ թույլ չտալ առանց Կոնգրեսի հավանության:

Ասոշիեյթեդ Պրես գործակալությունը հաղորդում է, որ օկրուգային դատավոր Ջոզեֆ Տաուրոն ընթացք է տվել հայցին: Գործը դատարանում լսվելու է փետրվարի 20-ին:

Հայցվորներից մեկի՝ Միշիգանի նահանգի դեմոկրատ կոնգրեսական Ջոն Կոնիերսի խոսքերով, 2002 թ. հոկտեմբերին Կոնգրեսի ընդունած բանաձեւը պատշաճանում է Իրաքի պատերազմի գաղափարը, բայց պատերազմի հայտարարություն չէ: Տվյալ որոշման ընդունման պատասխանատվությունն ընկած է ԱՄՆ նախագահի վրա: Մինչդեռ ԱՄՆ սահմանադրության մեջ ուղղակի նշվում է, որ պատերազմ հայտարարում է Կոնգրեսը:

Իսկ բոստոնցի փաստաբան Ջոն Բոնիֆազը մտադիր է դատական կարգով հասնել պատերազմ հայտարարելու Ջորջ Բուշի փորձերի արգելմանը: «Նախագահը թագավոր չէ: Նա իրավասու չէ այլ պետությունների պատերազմ հայտարարել առանց Կոնգրեսի թույլտվության»:

1990 թ. Կոնգրեսի 54 անդամներ փորձել էին համանման հայց ներկայացնել Ջորջ Բուշ ավագի դեմ, որպեսզի կանխեն Պարսից ծոցի պատերազմը, բայց այն ժամանակ հայցը մերժվել էր, քանի որ, դատավորի կարծիքով, հայցվորները չէին ներկայացնում բոլոր կոնգրեսականների անգամ 1/10-ը: Մինչդեռ այս անգամ, Բոնիֆազի կարծիքով, գործի բարեհաջող ավարտի հավանականությունն ավելի մեծ է, քանի որ հայցին միացել են զինվորականներ եւ քաղաքացիական անձինք, ում մերձավորների կյանքը վտանգված է:

Առաջին անգամ բացվեց երկու Կորեաների սահմանը

Վերջին 50 տարիներին հերմետիկորեն փակված երկու Կորեաների ցամաքային սահմանը երեկ առաջին անգամ բացվել է: Ֆրանսպրես գործակալությունը հաղորդում է, որ հարավկորեացի 498 զբոսաշրջիկներ ավտոբուսներով մեկնել են դեպի ԿԺԴՀ Կումգան լեռան վրա գտնվող հանգրվան, անցնելով Կորեական թերակղզու արեւելքում ականազերծված հատուկ միջանցքով:



Երկու Կորեաների մերձեցման այս խորհրդանշական քայլը տեղի է ունենում ԿԺԴՀ միջուկային նկրտումների առաջացրած միջազգային լարվածության պայմաններում: Հարավային Կորեայի հեռուստատեսությամբ ցուցադրվել է 20 ավտոբուսների մեկնումը, որն ուղեկցվել է հրավառությամբ: Թերակղզու հյուսիսը հարավին միացնող առայժմ ժամանակավոր ավտոճանապարհը ցամաքային միակ ուղին է 1953 թ. զինադադարից ի վեր: Վերջին տարիներին ԿԺԴՀ այցելած հարավկորեացի սակավաթիվ զբոսաշրջիկներն այնտեղ էին մեկնում նավերով:

2000 թ. հունիսին կորեացի նախագահներ Կիմ Չոն Իրի եւ Կիմ Տե Չժունի հանդիպման ժամանակ որոշվեց վերականգնել երկու Կորեաների ցամաքային կապը: Նախատեսվում է թերակղզու արեւելքում եւ արեւմուտքում բացել երկաթգծեր եւ մայրուղիներ, որոնք թույլ կտան հասնել Ռուսաստան եւ Չինաստան: Հարավային Կորեայի վերամիավորման փոխնախարար Կիմ Հյուն Կիի խոսքերով, դրանք պետք է դառնան «վերահաշտեցման եւ բարգավաճման» ճանապարհներ:

Երկաթգծերի եւ մայրուղիների կառուցումը տարիներ շարունակ ձգձգվում է միջկորեական տարածքային հարցերի եւ ԿԺԴՀ-ԱՄՆ հարաբերությունների լարվածության պատճառով: Այդ լարվածությունը մասնավորապես թույլ չտվեց, որ անցյալ տարվա վերջին վերականգնվի երկու Կորեաների երկաթուղային հաղորդակցությունը:

Իրաքի հետպատերազմյան կառավարման ծրագիրը հայտնի է

Ամերիկյան «Քրիսչն սայնս մոնիթոր» թերթը տեղեկացնում է, որ նախագահ Ջորջ Բուշի վարչակազմն ընդունել է Իրաքի հետպատերազմյան կառուցվածքի ծրագիր: Վարչակազմի ներկայացուցիչները սենատորներին հայտնել են, որ Սադդամ Հուսեյնի տապալումից հետո առնվազն երկու տարի կպահանջվի, մինչեւ որ ամերիկացի զինվորականները կարողանան երկրի վերահսկողությունը լիովին փոխանցել իրաքյան նոր կառավարությանը:

Իրաքի հետպատերազմյան կառուցվածքի ծրագիրը կազմելիս ամերիկացիները հիմք են ընդունել Գերմանիայի եւ Ճապոնիայի օրինակները: Երկրորդ աշխարհամարտից հետո ամերիկացիներն օկուպացրին այդ երկրները, ապա իշխանությունը հանձնեցին ժողովրդավարական կառավարություններին:

Սկզբնական շրջանում Իրաքի «զինվորական պարետի» պարտականությունները թերեւս կատարի ԱՄՆ կենտրոնական հրամանատարության ղեկավար, գեներալ Թոմի Ֆրենկսը: Մինչեւ վերջերս ենթադրվում էր, թե Իրաքի նոր կառավարություն կկազմեն իրաքցի ընդդիմադիր գործիչները: Սակայն այսօր ամերիկացիները պնդում են, թե երկպառակությունները կանխելու նպատակով իրենք նախընտրում են իշխանությունը միանգամից չհանձնել իրաքցիներին:

Իրաքցի որոշ ընդդիմադիրներ ֆնադատել են ամերիկացիների ծրագիրը, ասելով, թե դա հավասարազոր է Իրաքի օկուպացմանը: Նրանք պնդում են, թե ծրագիրը կազմված է ի հաճույս Թուրքիայի եւ արաբական այն երկրների, որոնք դեմ են ժողովրդավարական եւ դաշնային Իրաքի ստեղծմանը:

Սիդնեյում բնակվող իրաքցի նախկին դիվանագետ Մուհամմեդ ալ Ջաբիրին, որը պարբերաբար բանակցում է ամերիկացիների հետ, նշում է, որ նրանք արդեն բեկնածու են ընտրել Սադդամ Հուսեյնի տապալումից հետո Իրաքը ղեկավարելու համար: Դա խոշորագույն ընդդիմադիր ուժերից մեկի՝ Իրաքյան ազգային կոնգրեսի ղեկավար Ահմեդ Չալաբին է: Ենթադրվում է, որ նա կգլխավորի անցումային ժամանակավոր կառավարությունը: Չալաբին վայելում է Սդիսակ տան եւ Պենտագոնի վստահությունը:

«Քրիսչն սայնս մոնիթորի» տվյալներով, Չալաբին ներկայումս Իրաքի հյուսիսում է՝ քրդերի վերահսկողության տակ գտնվող Սալահ էդ Դին քաղաքում, որտեղ փետրվարի 15-ին անցկացվելու է ընդդիմադիր ուժերի համաժողով: Ազատական հայացքների տեր Չալաբին իրաքցի տարագիրների շրջանում անվիճելի ժողովրդականություն չի վայելում, բայց Իրանի կառավարությունը վստահում է նրան:

Վերլուծաբանները կարծում են, որ իրաքյան ընդդիմության շարքերում միասնության բացակայությունը փաստորեն անհնար կդարձնի դրա ներկայացուցիչներից անցումային կառավարության կազմավորումը, ուստի ամերիկացիները թերեւս մի քանի տարով օկուպացնեն Իրաքը՝ այնտեղ կարգուկանոն պահպանելու նպատակով:

Ավելացնենք, որ մյուս՝ հողարկված նպատակն Իրաքի նավթային հարստություններին տիրանալն է:

Պ. Ռ.

ԿՈՄԿ

Թուրքերը խոցված են Բեռլինյան փառատոնի մեծ ժյուրին գլխավորելու պատիվն այս տարի. ինչպես հայտնի է, բաժին է ընկել Աստվ Եղոյանին, որի միջազգային վարկը նրան լիովին իրավունք է ընձեռում նախագահելու ամենահեղինակավոր կինոֆորումներից մեկը: Բայց նման ընտրությունը, մանավանդ անցյալ տարի Կաննում էկրանային մկրտություն ստացած «Արարատ»-ից հետո, վիրավորել է Գերմանիայի բուրական համայնքի եւ հատկապես այդ երկրում փիլ թե շատ հաջողության հասած բուրք կինոռեժիսորների ազգասիրական զգացմունքները: Նրանք կնախընտրեին Բեռլինալեի գլխավոր դատավորի դերում տեսնել ում ասես, միայն թե ոչ Եղոյանին: Մինչդեռ փառատոնի տնօրինությունը հարկ չի համարել հաշվի նստել այս մասնավոր կարծիքի հետ եւ առաջնորդվել է ավելի լայնախոհ նկատառումներով:

«Ատծո ցասման» եւ «երջանկության սպասելու» միջեւ

Ատոմ Եղոյանի գլխավորած ժյուրիի անդամների թվում են ամերիկացի ռեժիսոր, «Ալիֆի կատարին», «Տարօրինակ օրեր», «Կ-19» ֆիլմերով հայտնի Քեթրին Բիգլոուն, գերմանացի դերասանուհի, «Գեղեցկուհի Մարթան» կատակերգությամբ ճանաչված Մարտինա Հեդեքը (այս ֆիլմն անցած գարնանը ցուցադրվեց գերմանական կինոյի երեւանյան օրերի ընթացքում), ֆրանսիացի դերասան եւ պրոդյուսեր Յումբեր Բալասանը, Սանդենսի անկախ կինոյի փառատոնի տնօրեն Ջեֆրի Գիլմորը:

Բուրկինա Ֆասոյի ներկայացուցիչ Իդրիսա Ուեդրաոգոն, չհասցնելով ավարտել իր «Ատծո ցասումը» ֆիլմը, ստիպված է եղել հրաժարվել Բեռլինալեի «ատենակալների» կազմում հայտնվելու պատվից, եւ, ի գոհունակություն փառատոնի տնօրեն Դիթեր Կոսլիկի, նրան փոխարինել է մավրիտանացի Աբդեռահման Սիսակոն, որի «Երջանկությանն սպասելիս» կինոնկարը Կան-2002-ի «Հատուկ հայացք» ծրագրում արժանացել է կինոքննադատների մրցանակին:

Բեռլինյան ամառ

Հակառակ այն սպասումների, թե կինոմարաթոնը կմեկնարկի գերմանական ֆիլմով, ինչպես անցյալ տարի փառատոնի սկիզբն ազդարարեց Թոմ Թիվվերի «Դրախտը», 53-րդ Բեռլինալեի հանդիսավոր բացմանը Գերմանիայի բուրական համայնքի եւ հատկապես այդ երկրում փիլ թե շատ հաջողության հասած բուրք կինոռեժիսորների ազգասիրական զգացմունքները: Նրանք կնախընտրեին Բեռլինալեի գլխավոր դատավորի դերում տեսնել ում ասես, միայն թե ոչ Եղոյանին: Մինչդեռ փառատոնի տնօրինությունը հարկ չի համարել հաշվի նստել այս մասնավոր կարծիքի հետ եւ առաջնորդվել է ավելի լայնախոհ նկատառումներով:

ցուցադրվեց «Չիկագո» ամերիկյան մյուզիքլը, որն արդեն մի խուրձ «Ոսկե գլոբուսների» է արժանացել եւ մի քանի անվանակարգով ներկայացված է «Օսկարի», ընդ որում նաեւ՝ իբրեւ լավագույն ֆիլմ: Հոլիվուդին ուղղված այս ռեւերանսը նախկինում գուցեեւ ընկալվեր առանց հավելյալ մեկնաբանությունների, որպես Բեռլինի ավանդական տուրքն ամերիկանիզմին, բայց այսօր մտորումների տեղիք է տալիս:

Անցյալ տարի, երբ փառատոնի տնօրինությունը փոխվեց, ի դեմս նոր տնօրենի՝ Դիթեր Կոսլիկի դիրքորոշման, շեշտվեց նախապատվությունը եվրոպական կինոմշակույթին, բեռլինյան նոր պատի կարեւորությունն ընդդեմ հոլիվուդյան էքսպանսիոնիզմի ու ծավալապաշտության: Բայց երեւում է, բեռլինյան պատը քանդվել է անվերադարձ, իսկ նոր անջրպետի կառուցումը գլոբալիզմի շնչով համակված աշխարհում գերբնական ջանքեր է պահանջում: Համենայն դեպս, Բրոդվեյի բեմից էկրանային կյանք առած «Չիկագոն» շուք ու շռինդով վերահաստատեց Հոլիվուդի գերիշխանությունը՝ վերջ դնելով բեւեռային ամառն ըստ վաղանցուկ բեռլինյան «հեղափոխությանը»:

Միակ վերապահումը

Եթե պրն Կոսլիկն էլ պիտի ջանար փառատոնի նախկին տնօրեն Մորից դե Հադելնի պես Հոլիվուդին սիրաշահել, ուրեմն ի՞նչ կարիք կար նրանց մեկը մյուսով փոխարինել: Իսկ այս հունակությունն փառատոնի տնօրեն Դիթեր Կոսլիկի, նրան փոխարինել է մավրիտանացի Աբդեռահման Սիսակոն, որի «Երջանկությանն սպասելիս» կինոնկարը Կան-2002-ի «Հատուկ հայացք» ծրագրում արժանացել է կինոքննադատների մրցանակին:

«Չիկագո»

տարվա Բեռլինալեի առանձնահատուկ վերաբերմունքը ամերիկացիների հանդեպ բնավ էլ չի սահմանափակվում երկրպագուի ծնրադրությամբ «Չիկագոյի» առջեւ: Մրցութային ծրագրում տեղ գտած 19 ֆիլմերից 6-ն ամերիկյան են: Սիդնի Դալդրիի «Ժամերը» եւ Սփայք Ջոնզի «Էկրանացումը» արդեն «Ոսկե գլոբուսներ» են շահել եւ «Օսկարի» այս տարվա հավակնորդների շարքում են: Եթե սրանց ավելացնենք Ալան Փարքերի «Դեյվիդ Գեյլի կյանքը», Սփայք Լիի «25-րդ ժամը», Սիդնի Սոդերբերգի «Սոլյարիսը», պարզ կդառնա, որ ամերիկյան կինոծրագիրը կազմված է հեղինակային, «լուրջ» կինոյի նմուշներից եւ ոչ թե հոլիվուդյան «մեծ ոճի» կամ «մեյնսթրիմի» կոթողներից, ինչպես Մորից դե Հադելնի օրոք էր: Սա միակ վերապահումն է, որ Դիթեր Կոսլիկին կարող է ինչոր կերպ արդարացնել՝ վերը տրված հարցին ի պատասխան:

Քլունիի բենեֆիսը

Անդրեյ Տարկովսկու ֆիլմից 20 տարի անց օսկարակիր Սիդնի Սոդերբերգը վերսին էկրանավորել է լեհ ֆանտաստ Ստանիսլավ Լեմի «Սոլյարիս» վիպակը, որտեղ հեռավոր մոլորակի առեղծվածային օվկիանոսը նյութականացնում է երկրաբնակ մարդկանց ենթագիտակցության խորքերում թաքնված պատկերները: Քրիս Քելվինի դերում, որին վիճակված է մղձավանջային Սոլյարիսում հանդիպել իր ինքնասպան կնոջը, լիտվացի դերասան Դոնատաս Բանիոնիսին փոխարինել է Հոլիվուդի շքեղ տղամարդկանցից մեկը՝ Ջորջ Քլունին: Որպես հետեւանք՝ սիրային տեսարաններում Քլունիի աստեղային «հետույքը ստվերում է թողել «Սոլյարիսի» կարեւոր մետաֆիզիկական թեմաները», մի իրողություն, որ խիստ վնասացրել է սեխ խորհրդանիշին: Քլունին, չնայած այդ տիպողսին ու կնամոլի համբավին, ավելի լուրջ վերաբերմունք է ակնկալում սեփական անձի հանդեպ, ուստի հանդիսատեսին է ներկայացել նաեւ ռեժիսորի դերում՝ նկարահանելով իր առաջին ֆիլմը՝ «Վտանգավոր մարդու խոստովանությունները»: Սա նույնպես էկրանացում է՝ նախկին շոումեն Չակ Բարիսի ինքնակենսագրական գրքի կինոտարբերակը, որ կարելի է համարել հեռուստատեսության բարքերի էքսցենտրիկ երգիծանք, թեեւ եւ Բարիսը, եւ Քլունին ճանաչման են հասել հենց հեռուստատեսության շնորհիվ:

Եվրոպացիները

Հոլիվուդը մրցութային ծրագրում տեղ է գտավել, իհարկե, եվրոպական կինոյի հաշվին: Եթե նախորդ Բեռլինալեում Գերմանիան ինքը ներկայացված էր հինգ ֆիլմով, այս տարի այդ պատվին են արժանացել ընդամենը երեք ժապավեններ՝ Վոլֆգանգ Բեքերի «Գուդբայ, Լենին»-ը, Օսկար Ռելերի «Ծեր կապկի վախը» եւ Հանս Քրիստիան Շմիդտի «Լույսերը»: Երեք ֆիլմով է փառատոնին մասնակցում նաեւ Ֆրանսիան, ընդ որում ընտրվել են 72-ամյա վետերան Կլոդ Շաբրոլի բողոքերյան վերնագրով աշխատանքը՝ «Չարի ծաղիկը» եւ 2001-ին բեռլինյան «Ոսկե արջի» մրցանակակիր դարձած Պատրիս Շերոյի «Նրա եղբայրը»: Ի դեպ, այս տարի հենց Շերոն կնախագահի Կաննի մեծ ժյուրին:

Եվրոպացիների շարքում մի հատիկ տեղ էլ ճարվել է իտալացի Գաբրիելե Սալվատորեսի եւ նրա «Ես չեմ վախենում» ֆիլմի համար: Ինչ վերաբերում է ավանդաբար Բեռլինալեի շրջանակներում ընդգրկվող Արեւելյան եվրոպային, այս անգամ միակ բացառությունն արվել է սլովեն ռեժիսոր Դամեն Կոզոլեի «Պատմյա վեստերան Կլոդ Շաբրոլի բողոքերյան վերնագրով աշխատանքը՝ «Չարի ծաղիկը» եւ 2001-ին բեռլինյան «Ոսկե արջի» մրցանակակիր դարձած Պատրիս Շերոյի «Նրա եղբայրը»: Ի դեպ, այս տարի հենց Շերոն կնախագահի Կաննի մեծ ժյուրին:

Ասիացիները

Ինչպես Կաննը եւ Վենետիկը, Բեռլինն էլ, սովորաբար, հյուրընկալորեն դռներն է բացում ասիական կինոյի առաջ: Բայց հիմա այդ հյուրընկալությունից օգտվել են միայն երկու ընտրյալներ: Ճապոնական էկրանի վարպետ, 71-ամյա Յոձի Յամադայի անցագիրն ապահովել են պատկառելի վաստակն ու տարիքը՝ հնարավորություն ընձեռելով նրան ներկայացնելու իր «Սքնշաղի սամուրայը», իսկ չինացի Չժան Իմոուի համար, որը փառատոն է բերել «Հերոսը» դյուցազնապատումը, նման անցագիր է դարձել այն պատմական փաստը, որ հենց Բեռլինն է ժամանակին նրան «հայտնագործել»:

Ռուսների վիրավորանքը

Անցյալ տարի Կաննի մրցութային ծրագրին մասնակից դարձավ Ալեքսանդր Սոկուրովն իր «Ռուսական տաղանով», իսկ Վենետիկում Անդրեյ Կոնչալովսկին «Հիմարների տան» համար արժանացավ ժյուրիի Մեծ մրցանակին: Այդ ծեռքբերումներից հետո ռուսներն իրենց խիստ վիրավորված են զգում Բեռլինալեի շրջանակներից իսպառ դուրս մնալու համար: Բայց ի՞նչ կարող ես անել, եթե Բեռլինի համար ռուսական արժանավոր կինո, Սոկուրովից բացի, գոյություն չունի: Հենց Սոկուրովի համար էլ, որի ֆիլմերը նկարահանվում են Գերմանիայի ֆինանսական աջակցությամբ, նախատեսվել է հատուկ մրցանակ:

Ջորջ Քլունի

Գոլֆ Անուկ Էմեի

Նախորդ Բեռլինալեն իր մեծարանքի տուրքը մատուցեց Կլաուդիա Կարդինալեին: Այս անգամ կինովաստակի համար սահմանված «Ոսկե արջը» Անուկ Էմեի բաժինն է: Իհարկե, ոմանք առիթը չեն կորցրել նկատելու, որ Բեռլինը ուշացումով է սթափվել, մրցանակը կարելի էր հանձնել դեռ անցյալ տարի, երբ դերասանուհին բոլորեց ծննդյան 70-ամյակը: Կնոջ տարիքը նշելը, ինչ խոսք, պատշաճ բան չէ, բայց սֆինքսի պես խորհրդավոր Անուկ Էմեն այն կանանցից է, որոնց հմայքն ու տաղանդը տարիներն անզոր են ավերել, ուստի նրանք կարծես ժամանակից դուրս են:

Անուկ Էմե

Էմեի կինոուղին սկիզբ է առել 1947-ին, նրա առաջին հերոսուհին Անրի Կալեֆի «Ծովեզրի տունը» ֆիլմում պանդոկի մատուցողուհի էր, «մի անմեղ ու շփոթահար Օֆելիա»՝ Անուկ անունով: Այդ ժամանակից ի վեր ծագումով հրեուհի Ֆրանսուազ Դրեյֆուսը գերադասեց Անուկ կոչվել, իսկ Էմե կեղծանունը, որ նշանակում է «սիրված», նրա համար գտել է բանաստեղծ Ժակ Պրեւերը: Այս կեղծանունը, բառիս բուն իմաստով, իրեն արդարացրեց: Կլոդ Լելուշի «Տղամարդը եւ կինը» մելոդրամից հետո, որն էկրան բարձրացավ 1966-ին ու 40-ից ավելի պարգեւներ շահեց (այդ թվում՝ եւ Կաննի «Ոսկե արմավենու ճյուղն» ու «Օսկար»») Անուկ Էմեի անունը բոլորի շուրթերին էր, թեեւ մինչ այդ նա Մարչելլո Մաստրոյաննիի ընկերակցությամբ արդեն խաղացել էր Ֆելլինիի գլուխգործոցների կարգն անցած «Քաղցր կյանք» եւ «Ուր ու կես» ֆիլմերում: Իսկ հետագա տարիներին Էմեն աշխատեց Քյուրոի, Դեմիի, Բելոկկիոյի, Բերտոլուչչիի, Օլթմանի նման ռեժիսորների հետ եւ նույնիսկ սկսեց վեպեր գրել:

Կինոն այս արտասովոր կնոջը մեծ համբավ բերեց, իսկ մեծ եկամուտներ՝ երբեմ: Դա չի վնասում Էմեին. «Ես գերադասում եմ աղքատ լինել, բայց հպարտ, որ հրաժարվել եմ նկարահանվել ինձ առաջարկված բոլոր անհեթեթ, տխմար, գռեհիկ ու անօգուտ ֆիլմերից»:

P. S.

Փետրվարի 6-ին սկիզբ առած կինոմարաթոնն արդեն մոտեցել է իր վերջնագծին: Վաղը հայտնի կդառնա, թե Անուկ Էմեի եւ Ալեքսանդր Սոկուրովի կողքին բեռլինյան «արջերի» նոր տերերն ովքեր են:

ՀԱՅՈՐԴ ՇԱԲԱԹ՝ ՀԵՌՈՒՍՏԱԷԿՐԱՆՆԵՐԻՆ

Արժե դիտել

17 փետրվարի, 00.20 երեւան

■ **«Անհավատարիմը»**★: Ռեժիսոր՝ Ադրիան Լայն: Դերերում. Ռիչարդ Գիր, Դայան Լեյն, Օլիվյե Մարտինես: ԱՄՆ, 2001:

Ամուսնական անհավատարմության պատմություն՝ բրիլերի փաթեթավորմամբ:

18 փետրվարի, 22.45 Հ1

■ **«Արարատ»**★★: Ռեժիսոր՝ Ատոմ Եղոյան: Դերերում. Դեյվիդ Ալփեյ, Արսինե Խանջյան, Շառլ Ազնավուր, Քրիսթոֆեր Պլամեր, Մարիժոզե Քրոզ, էլեաս Կոտեաս, Էրիկ Պոդոսյան: Կանադա, 2002:

Հայոց եղեռնը ցավագին արձագանք է թողել թե մեծ նկարիչ Արշիլ Գորկու կյանքում, թե ժամանակակիցների հոգում:

18 փետրվարի, 24.00 Պրոմեթեւս

■ **«Սիմոնա»**★: Ռեժիսոր՝ Էնդրյու Նիքոլ: Դերերում. Ալ Պաչինո, Քեթրին Քիներ, Ուայնոնա Ռայդեր: ԱՄՆ, 2002:

Համակարգչի օգնությամբ ծնված վիրտուալ դերասանուհին, ի զարմանս իր «կնքահայր» պրոդյուսերի, ասպ է դառնում:

18 փետրվարի, 01.45 Հ1

■ **«Բերման ենթարկելով»**★: Ռեժիսոր՝ Ալեն Բերբերյան: Դերերում. Ժերար Լանվեն, Բենուա Պոլվուրդ, Ռոսսի Դե Պալմա: Ֆրանսիա, 2002:

Խենթուրախ կատակերգություն:

20 փետրվարի, 24.00 Պրոմեթեւս

■ **«Էկրանացում»**★★: Ռեժիսոր՝ Սփայք Ջոնզ: Դերերում. Նիքոլաս Քեյջ, Մերիլ Սթրիփ, Քրիս Քուփեր: ԱՄՆ, 2002:

Սցենարի էկրանացման քարքարոտ ճանապարհի մասին պատմող ֆիլմը, որ առաջադրված է «Օսկարի», վերջերս «Ոսկե գլոբուսներ» բերեց Մ. Սթրիփին եւ Ք. Քուփերին:

21 փետրվարի, 23.20 Կենտրոն

■ **«Շորս փետուր»**★: Ռեժիսոր՝ Շեխհար Կապուր: Դերերում. Հիթ Լեջեր, Ուես Բենթլի, Քեյթ Հադսոն: ԱՄՆ, 2002:

Պատմական կինոկոթող, որի հերոսը ձգտում է վերադարձնել իր արատավորված պատիվը, ընկերների հարգանքն ու սիրած աղջկան:

21 փետրվարի, 23.45 Հայ TV

■ **«Խոսիր նրա հետ»**★★: Ռեժիսոր՝ Պեդրո Ալմոդովար: Դերերում. Խավիեր Կամարա, Դարիո Գրանդինետտի, Լեոնոր Ուորինգ, Ռոզարիո Ֆլորես: Իսպանիա, 2002:

Արտահայտ մելոդրամ, որ վերջերս արժանացավ «Ոսկե գլոբուսի» եւ ներկայացված է «Օսկարի»:

23 փետրվարի, 19.00 Հ1

■ **«Խաղալիքը»**★★: Ռեժիսոր՝ Ֆրանսիս Վեբեր: Ռեժիսոր՝ Պիեռ Ռիշար, Միշել Բու

Անին գլխավոր հավակնորդ

Մարզական մամուլի եվրոպական ընկերակցության սահմանած «Ոսկե խաղակոշիկ» մրցանակի համար պայքարը գնալով ավելի թեժ բնույթ է կրում: Եվրոպական երկրների լավագույն ռմբարկուները ոչ միայն Պաուլետայի միջեւ: Ճիշտ է, Անգլիայի եւ Ֆրանսիայի առաջնություններում մնացել է անցկացնել 11 տուր, մինչդեռ Իսպանիայում դեռեւս 17 տուր պետք է կայանա, իսկ իտալացիներն ու գերմանացիները 14-ական խաղ պետք է անցկացնեն: Ռմբարկուների միջեւ մղվող պայքարում կարող են ճակատագրական դառնալ ֆուտբոլիստների վնասվածքները: Այս առումով առաջնությունների վերջին տուրն անհաջող էր հավակնորդներից երկուսի «Ինտերի» հարձակվող Քրիստիան Վիերիի եւ շոտլանդական «Սելթիկի» ռմբարկու Հենրիկ Լարսոնի համար: Վիերին «Ռեջինայի» հետ խաղում 10-րդ րոպեին բացելով հաշիվը, 9 րոպե անց վնասվածքի պատճառով թողեց խաղադաշտը: Ավելի ծանր վնասվածք ստացավ Լարսոնը: «Լիվինգստոնի» խաղացող Գուստավ Բեխոկենի հետ բախվելով, Լարսոնը կոտրեց ծնոտը եւ հայտնի չէ, թե երբ կկարողանա կրկին ասպարեզ դուրս գալ: Այնպես որ, մյուս հավակնորդներն այդ ընթացքում կարող են ավելացնել իրենց գոլերի թիվը: Առաջնության վերջին տուրը հատկապես հաջող էր բելգիական «Գենկ» թիմի ռմբարկու Վեսլի Սոնկի համար, որը «Էկսելսյորի» դարպասը խփեց 4 գնդակ: Սոնկը եւս հավակնորդների թվում է, սակայն նրան դժվար կլինի գերազանցել մրցակիցներին, քանի որ երկրի գործակիցը 1,5 է:

Առայժմ առաջին երկու հորիզոնականները զբաղեցնում են Անդրեյ Կռիլովն ու Արման Քարամյանը, որոնք վաղուց ավարտել են ելույթները: Այնպես որ, շուտով նրանք կգիջեն իրենց դիրքերը: Հաշվի առնելով Վիերիի եւ Լարսոնի ստացած վնասվածքները, ցուցակը գլխավորելու հիանալի հնարավորություն է ընծեռվում «Արսենալի» հարձակվող Տյերի Անրին:

Այսօրվա դրությամբ «Ոսկե խաղակոշիկի» հավակնորդների ցանկն այսպիսին է.

		Գոլ	Գործ.	Միավոր
1. Անդրեյ Կռիլով	ՏՎՄԿ Էստոնիա	37	1	37
2. Արման Քարամյան	«Փյունիկ» Հայաստան	36	1	36
3. Հենրիկ Լարսոն	«Սելթիկ» Շոտլանդիա	24	1,5	36
4. Տյերի Անրի	«Արսենալ» Անգլիա	18	2	36
5. Քրիստիան Վիերի	«Ինտեր» Իտալիա	18	2	36
6. Ջեյմս Բիշի	«Սաութհեմփթոն» Անգլիա	16	2	32
7. Վեսլի Սոնկ	«Գենկ» Բելգիա	20	1,5	30
8. Ռոյ Մաֆայ	«Դեպորտիվո» Իսպանիա	15	2	30
9. Պաուլետա	«Բորդո» Ֆրանսիա	15	2	30
10. Մաթեյա Կեժման	«Էյնդհովեն» Հոլանդիա	19	1,5	28,5
11. Այլտոն	«Վերդեր» Գերմանիա	14	2	28
12. Ալան Շիրեր	«Նյուքասլ» Անգլիա	14	2	28
13. Շաբանի Նոնդա	«Մոնակո» Ֆրանսիա	13	2	26
14. Հարալդ Բրաթբակ	«Ռոսենբորգ» Նորվեգիա	17	1,5	25,5
15. Ռայներ Ռաուֆման	«Օմոնիա» Կիպրոս	24	1	24
16. Մաֆսիմ Գրուզնով	«Տրանս» Էստոնիա	24	1	24
17. Պիտեր Իջե	«Մալմյո» Շվեդիա	24	1	24
18. Արկինս	«Պորտադաուն» Հս. Իռլանդ.	24	1	24
19. Ամսել Լավարե	«Բրեգենց» Ավստրիա	16	1,5	24
20. Ալեսանդրո դել Պիեռո	«Յուվենտուս» Իտալիա	12	2	24
21. Նիկոլա Անելկա	«Մանչեսթր սիթի» Անգլիա	12	2	24
22. Ռուդ վան Նիստելրոյ	«Մանչեսթր յուն.» Անգլիա	12	2	24
23. Թոմաս Քրիստիանսեն	«Բոխում» Գերմանիա	12	2	24

ՇԱԽՄԱՏ

Լավագույնն Արոնյանի արդյունքն է

Մոսկովյան շախմատային փառատոնի 3-րդ տուրն այնքան էլ հաջող չէր հայ շախմատիստների համար: Ուժեղագույնների խմբում առայժմ բոլորից հաջողը Լեւոն Արոնյանի ելույթն է, որը հերթական հաղթանակը տոնեց Ֆեոնանդեսի նկատմամբ եւ մի խումբ շախմատիստների հետ 2,5 միավորով առաջատարների խմբում է: Այդուսակը 3-ական միավորով գլխավորում են Մոիսեենկոն, Զվյագինցեւը, Ալեքսանդրովը, Եֆիմենկոն, Նաջերն ու Բոլոգանը: Արոնյանից հետո 2-րդ ցուցանիշը պատկանում է Գաբրիել Սարգսյանին ու Արտաշես Մինասյանին (2-ական միավոր): Գաբրիելը ոչ-ոքի խաղաց Մալախովի հետ, իսկ Մինասյանը հաղթեց Իլյինին: Իր օգտին հաղթական միավոր գրանցեց նաեւ Աշոտ Անասյանը՝ սեւերով պարտության մատնելով Կուռնոսովին: Աշոտը վաստակել է 1,5 միավոր: Մեկ միավոր գրանցվեց նաեւ Տիգրան Պետրոսյանի օգտին, որը խաղից ազատ էր (քանի որ «Ա» խմբում հանդես է գալիս 201 շախմատիստ, յուրաքանչյուր տուրում մասնակիցներից նվազագույն միավոր ունեցող շախմատիստներից մեկին գրանցվում է տեխնիկական հաղթանակ): Մեր մյուս 5 շախմատիստները՝ Արա Մինասյանը, Աշոտ Նադանյանը, Ռաֆայել Վահանյանը, Տիգրան Նալբանդյանն ու Հովհաննես Դանիելյանը, պարտվեցին:

Ավելի հաջող հանդես եկան «Բ» խմբում ընդգրկված մեր պատվիրակները: 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնելով, Վարդան Դանիելյանը Յոնկմանի, Մարյասինի եւ Միթելմանի հետ գլխավորում է աղյուսակը: Նրանցից կեսական միավորով հետ են մնում Դավիթ Պետրոսյանը, Տիգրան Քոթանջյանը, Արթուր Չիբուխչյանը, Էլինա Դանիելյանն ու Դավիթ Հարությունյանը: 3-րդ տուրում Չիբուխչյանն ու Հարությունյանը հաղթեցին, մյուսները ոչ-ոքի խաղացին: Առայժմ միավոր չի վաստակել Ջեյրանյանը:

«Գ» խմբի առաջատարներից Հայկ Վարդանյանն ու Լեւոն Բաբուջյանը, ցավոք, անհաջողության մատնվեցին՝

զիջելով համապատասխանաբար Պրոկուրորովին եւ Բայրախնուն: Պարտություն կրեց նաեւ Վարդգես Սարգսյանը, իսկ ահա Տոնոյանը հաղթեց մրցակցին: Այս խմբում աղյուսակը 3-ական միավորով գլխավորում են Պրոկուրորովը, Մորխաբվիլին, Բայրախնին, Յորովը, Գիլեը, Բուլյակեւիչը, Դանգը, Մախիմովը, Անտոնովը եւ Վելիկանովը:

Խաղին մասնակցել է 14 ֆուտբոլիստ

Ընթերցողներին անշուշտ կհետաքրքրի, թե ֆուտբոլի ՀՀ հավաքականն Իսրայելի ընտրանու հետ ընկերական մրցախաղում, որն անցկացվել է Ռամաթ Գանի մարզադաշտում, 7 հազար հանդիսականի ներկայությամբ, ինչպիսի՞ կազմով է հանդես եկել: Ներկայացնում ենք թիմերի կազմերը.

Հայաստան- Արմեն Համբարձումյան, Արթուր Մկրտչյան (Վախթանգ Հակոբյան, 76), Կարեն Դոխոյան, Հարություն Վարդանյան, Խոսե Բիլիբիո (Տիգրան Ղազանչյան, 83), Ռոմիկ Խաչատրյան, Արթուր Պետրոսյան, Արթուր Ոսկանյան, Արտավազդ Քարամյան, Արմեն Շահգելդյան (Էդուարդ Պարծիկյան, 67), Արման Քարամյան:

Իսրայել- Ավատ (Էլիմելեխ, 55), Խարազի (Ժանո, 46), Բեն Հաիմ (Աֆեկ, 88), Բենադո (Գերշոն, 46), Կեյսի (Անտեբի, 46), Բաղիր (Ալբերման, 55), Զանդբերգ (Դեգո, 73), Աբուտսիս (Բիտոն, 46), Նիմնի (Տալ, 43), Բենայուն (Հոլցման, 73), Ռեւիվո (Լուզ, 76):

Հանդիպումը վարել է իտալացի մրցավար Ալֆրեդո Տրենտալանգեն:

Ընդունվեց «արծաթե գոլի» կանոնը

Եվրոպական առաջատար 102 ակումբների ներկայացուցիչների մասնակցությամբ Նիոնում՝ ՈՒԵՖԱ-ի կենտրոնակայանում կայացած խորհրդակցությունում մարզիչները դեմ են արտահայտվել ՖԻՖԱ-ի հովանու ներքո անցկացվող կոնֆեդերացիայի գավաթին եւ աշխարհի թիմային առաջնությանը: Պատճառաբանությունը մեկն է. առանց այն էլ ֆուտբոլիստները ծանրաբեռնված են ազգային առաջնությունների ու գավաթի, հավաքականների եւ եվրագավաթների հանդիպումներով, ուստի լրացուցիչ մրցաշարերի մասնակցության կարիք չկա: Ակումբների ղեկավարները նաեւ ՈՒԵՖԱ-ի եւ ՖԻՖԱ-ի առջեւ հարց բարձրացրին հավաքականներում հանդես եկող ֆուտբոլիստների պարտադիր բժշկական ապահովագրության եւ թիմերի դրամական փոխհատուցման վերաբերյալ: Քննարկվել է նաեւ արհեստական ծածկույթով խաղադաշտերում եվրագավաթների հանդիպումների անցկացման հարցը: ՈՒԵՖԱ-ն այդ նպատակով ընտրել էր Մոսկվայի «Լուժնիկի», ավստրիական «Զալցբուրգ», շվեդական «Այրավալեն» եւ թուրքական «Աբաթուրք» մարզադաշտերը փորձարկումների համար: Առայժմ ակումբների ներկայացուցիչներն այդ հարցում միակարծիք չեն, ուստի որոշվել է շարունակել փորձարկումները:

ՈՒԵՖԱ-ն առաջարկել է հաջորդ մրցաշրջանից իր հովանու ներքո անցկացվող մրցաշարերում կիրառել այսպես կոչված «արծաթե գոլի» կանոնը: Այն կկիրառվի չեմպիոնների լիգայի ներկայիս խաղարկությունում եւ ՈՒԵՖԱ-ի գավաթի եզրափակիչ խաղում: Համաձայն նոր կարգի, եթե խաղի հիմնական ժամանակում գրանցվում է ոչ-ոքի, ապա նշանակվում է լրացուցիչ մեկ խաղակես 15 րոպե տեւողությամբ: Եթե լրացուցիչ ժամանակում կողմերից մեկը գոլ է խփում, ապա խաղը չի ընդհատվում, ինչպես նախկինում «ոսկե գոլի» ժամանակ էր, այլ շարունակվում է մինչեւ վերջ: Եթե այդ ընթացքում մրցակցին հաջողվում է հավասարեցնել հաշիվը, ապա նշանակվում է 15 րոպեանոց լրացուցիչ 2-րդ խաղակեսը նույն սկզբունքով: Ոչ-ոքի արդյունքի դեպքում կնշանակվի 11 մ հարվածաշար:

«Արարատը» հանվել է առաջնության մասնակիցների կազմից

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, Իսրայել մեկնած ֆուտբոլի ՀՀ հավաքականների կազմում չէին «Արարատի» 5 ֆուտբոլիստներ: «Արարատ» ֆուտբոլային ակումբի նախագահ Հրաչ Կարապետյանը մինչ Իսրայել մեկնելը հատուկ նամակով ֆուտբոլի Հայաստանի ֆեդերացիայի նախագահին տեղեկացրել էր, որ անվտանգության նկատառումներից ելնելով, նպատակահարմար չի գտնում թիմի 5 խաղացողների՝ Ալեքսանդր Թադեւոսյանի, Արթուր Խաչատրյանի, Արթուր եւ Գաբրիել Պետրոսյանների, Արթուր Գաբրիելյանի երկրի ազգային եւ երիտասարդական հավաքականների կազմում մասնակցությունը Իսրայելի հավաքականների հետ հանդիպումներին: Միաժամանակ հավատիացրել էր, որ այլ պարագայում կարտահովի «Արարատի» ֆուտբոլիստների մասնակցությունը ՀՀ ազգային եւ երիտասարդական հավաքականների ուսումնամարզական հավաքներին եւ հանդիպումներին, որոնց միշտ առաջնային կարեւորություն է տրվել ակումբի ղեկավարության կողմից: Նամակի պատճենն ուղարկվել էր ՖԻՖԱ:

Երեկ ՀՖՖ-ի կարգապահական կոմիտեն քննարկելով հարցը, միաձայն չափազանց խիստ որոշում է ընդունել: Առաջնորդվելով կարգապահական կոմիտեի կանոնադրության 37-րդ հոդվածի 2-րդ կետով, «Արարատը» մեկ տարով զրկվել է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումներին մասնակցելուց, ակումբը տուգանվել է 200 հազար դրամով: Ելնելով հավաքականների շահերից, որոշվել է դիմել ֆուտբոլիստների կարգավիճակի կոմիտեին վերը նշված խաղացողներին ազատ ֆուտբոլիստի կարգավիճակ շնորհելու հարցով: Արձանագրվել է նաեւ, որ չնայած ՀՖՖ-ի գործկոմի որոշմանը, Արկադի Անդրեասյանը շարունակում է իր գործունեությունն ակումբում: Կարգապահական կոմիտեի որոշումն ուժի մեջ կմտնի գործկոմի նիստում հաստատվելուց հետո:

ՌԵԿՈՐԴ

Սերգեյ Օսիպովի նվաճումը

Մագնիտոգորսկի «Մետալուրգ» հոկեյիստ Սերգեյ Օսիպովը, որն իր նորամուտը հոկեյում նշել էր դեռեւս 1984 թ. Սվերդլովսկի «Ավտոմոբիլիստ» կազմում, նախկին ԽՍՀՄ եւ Ռուսաստանի առաջնություններում անցկացրած խաղերի քանակով (704) դարձավ ռուսական հոկեյի պատմության մեջ ռեկորդակիր: 36-ամյա հարձակվողը մեկ խաղով գերազանցեց խորհրդային հանրահայտ հոկեյիստ Վասիլի Պերվուխինի ցուցանիշը, որն իր ելույթներն ավարտել էր 1999 թ. 43 տարեկանում:

Ահա անցկացրած խաղերի քանակով 10 լավագույն արդյունքները.

1. Սերգեյ Օսիպով	704
2. Վասիլի Պերվուխին	703
3. Յուրի Շումակով	638
4. Անատոլի Վոդոպյանով	637
5. Վալերի Վասիլեւ	619
6. Դմիտրի Կրասոտկին	607
7. Ալեքսանդր Կորեցկով	594
8. Զինետուլա Բիլյալետդինով	591
9. Վլադիմիր Պետրով	586
10. Բորիս Միխայլով	581

29-ամյա ռեկորդը գերազանցվեց

Ռոթանցի Ալբերտ Գարսիան բելգիական Գենտ քաղաքում անցկացված միջազգային մրցումներում 5000 մ վազքում Եվրոպայի նոր ռեկորդ սահմանեց (13 րոպե 11,39 վրկ.): Նա գերազանցեց մայրցամաքի ամենահին ռեկորդներից մեկը, որը 29 տարի առաջ սահմանել էր բելգիացի էմիլ Պուտեմանսը (13.20,80):

Հուսադրող արդյունքներ

Մոսկվայում անցկացված բեթեռ ատլետիկայի երիտասարդական միջազգային մրցաշարում հանդես եկած 3 հայ մարզիկներից 2-ը հաջող մրցելույթներ ունեցան: Վանաձորցի Արսեն Սարգսյանը հեռացատկում 6 մ 96 սմ արդյունքով գրավեց 3-րդ տեղը: 60 մ վազքում գյումրեցի Արսյուշա Սիմոնյանը մրցաշրջանը հաղթահարեց 7 վրկ-ում՝ եզրափակելով լավագույն քառյակը: Մրցաշարին մասնակցում էին 32 երկրների ներկայացուցիչներ:

Հաղթեց ՌԴ հավաքականը

Կիպրոսում անցկացվող «չորսի մրցաշարի» հաղթող դարձավ ֆուտբոլի ՌԴ հավաքականը: Վճռական խաղում Վալերի Գազաեւի սանները 4-2 հաշվով պարտության մատնեցին ռումինացիներին: 3-րդ տեղը գրավեց Սլովակիայի ընտրանին, որը 3-1 հաշվով հաղթեց Կիպրոսի ֆուտբոլիստներին:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՆՇՈՒՄՆԵՐ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԻ ԿՈՂՄԻՑ

Վիզաները եւ անվտանգությունը

Սեպտեմբերի 11-ի հայտնի ահաբեկչությունից հետո ԱՄՆ պետքարտուղարությունը լրջորեն վերանայել է ոչ-ներգաղթային վիզաների տրամադրման կարգը: ԱՄՆ նախագահի եւ Կոնգրեսի պահանջով՝ պետքարտուղարությունն ԱՄՆ այցելողների նկատմամբ կիրառում է անվտանգության ավելի խիստ չափորոշիչներ: Անվտանգության չափորոշիչների այսպիսի խստացումը նպատակ ունի ԱՄՆ մուտք գործողների հանդեպ կիրառել սուգման լրացուցիչ միջոցառումներ՝ նախքան վիզա տրամադրելը:

Այն երկրների քաղաքացիները, որոնք ԱՄՆ պետքարտուղարության կողմից ճանաչվել են որպես միջազգային ահաբեկչությանը սատարող երկրներ, ԱՄՆ մուտի վիզա ձեռք բերելու համար պետք է ԱՄՆ պետքարտուղարությունից ստանան հատուկ թույլտվություն, եթե նույնիսկ նրանք նախկինում արդեն եղել են Միացյալ Նահանգներում եւ բացարձակ կապ չունեն ահաբեկչական կազմակերպությունների հետ: ԱՄՆ հյուպատոսություններին արգելվում է վիզա տրամադրել վերոհիշյալ երկրների քաղաքացիներին՝ առանց պետքարտուղարության համապատասխան թույլտվության, որի հետեւանքով վիզայի ձեւակերպումը կարող է երկարաձգվել մինչեւ մի քանի ամիս: Վերոհիշյալ երկրների թվում են Կուբան, Սիրիան, Իրանը, Իրաքը, Լիբիան, Սուդանը եւ Հյուսիսային Կորեան: ԱՄՆ մուտի վիզայի համար դիմող այլ երկրների քաղաքացիների հանդեպ եւս կարող է կիրառվել նշված սուգման կարգը, ինչը կարող է հանգեցնել վիզայի տրամադրման ժամկետների երկարաձգման:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տրամադրվող ոչ-ներգաղթային վիզաների գերակշռող մասը վավեր է տրման օրվանից 3 ամսվա ընթացքում: Հետեւաբար խնդրում ենք, որ ԱՄՆ ճամփորդել ցանկացողները իրենց դիմումները ներկայացնեն ԱՄՆ հյուպատոսական բաժին ճամփորդությունից առաջ հնարավորինս շուտ (ԱՄՆ մեկնելու օրվանից առնվազն 2 ամիս առաջ), որպեսզի վերոհիշյալ հավելյալ սուգումները չազդեն Ձեր ճամփորդական ծրագրերի վրա:

Մեր դիմորդների մեծ մասն արդեն տեղյակ է, որ 16 տարեկանից բարձր արական սեռի ներկայացուցիչները դիմումին կից ներկայացնում են լրացուցիչ հարցաթերթիկ, որը հնարավորություն է տալիս ավելի մանրամասն տեղեկություններ ստանալ տվյալ դիմորդի մասին: Այս պահանջը կիրառվում է ամբողջ աշխարհում՝ անկախ դիմորդի ազգությունից, կրոնական պատկանելությունից կամ նախկին ճամփորդություններից: Ավելին, բոլոր ուսանողները, ովքեր ցանկանում են ուսումնառել Միացյալ Նահանգներում, պետք է սովորական դիմումի հետ մեկտեղ ներկայացնեն հավելյալ հարցաթերթիկ: ԱՄՆ Ներգաղթի եւ հպատակագրման ծառայությունը հաստատել է հաշվառման նոր կարգ, ըստ որի ամերիկյան բոլոր համալսարանները պարտավոր են օտարերկրյա ուսանողների տվյալները մուտքագրել միջազգային տեղեկատվական ցանցի մեջ, որպեսզի նախքան տվյալ դիմորդին վիզա տրամադրելը յուրաքանչյուր հյուպատոսարան հավաստիանա, որ տվյալ անձը ընդունվել է այդ համալսարանը եւ այդ ուսումնական հաստատության ուսանող է: Ի վերջո, համակարգչային տեղեկատվական ցանցը, որում առկա տեղեկությունների հիման վրա հյուպատոսը տրամադրում է վիզա, հզոր խոչընդոտ է ահաբեկիչ եւ հանցագործ դիմորդների համար:

Անվտանգության այս լրացուցիչ չափորոշիչներն առանձնահատուկ չեն Հայաստանի համար: Ամբողջ աշխարհով մեկ ստեղծված ԱՄՆ հյուպատոսարանները գործում են ԱՄՆ օրենքներով սահմանված միեւնույն կանոնակարգի համաձայն: Ավելին, այս չափորոշիչները նպատակ չունեն որեւէ կերպ ճնշել Միացյալ Նահանգներ այցելել ցանկացողների նպատակներն ու ցանկությունները: Հուսով ենք, որ մեր դիմորդները մեծ ըմբռնումով կմոտենան նոր ընթացակարգին, որը, մեր խորին համոզմամբ, կնպաստի ԱՄՆ այցելողների անվտանգության ապահովմանը:

Ալֆրեդի սենյակում

14 փետրվար 33-րդ օր

Ավարտվեց եւս մեկ հեռուստախաղ, որը կրում էր «Ալֆրեդի սենյակում» անվանումը: 33 օր 8 ընտրյալներ անցկացրին փակ տարածքում՝ առանց արտաքին աշխարհի հետ շփվելու: Նրանց հրաժեշտ տալու էին եկել բազմաթիվ հյուրեր՝ հովանավորները, խաղի կազմակերպիչները, մասնակիցների ծնողներն ու ընկերները: Նրանցից յուրաքանչյուրն ասաց իր կարծիքը խաղի ու նրա մասնակիցների մասին: Ընկերների խոսքերով մասնակիցները չեն փոխվել, միայն Սուսանն խոստովանեց, որ նկատում է որոշակի փոփոխություն, Ալֆրեդի սենյակում նա ստուգեց իր համբերությունը: Մասնակիցները նույնպես հայտնեցին իրենց շնորհակալությունը խաղի կազմակերպիչներից, հովանավորներից, հեռուստադիտողներից եւ որն Ալֆրեդից:

Պրն Ալֆրեդը մասնակիցներին ենթարկեց ամենավերջին փորձությանը: Մասնակիցներից յուրաքանչյուրը վերցրեց սեղանին դրված անուններից մեկը եւ քվեարկեց Ալեքսի կամ Վաչեի օգտին: Ալեքսի համար ձայն տվեցին Մասն ու Լիլիթը: Մյուսները քվեարկեցին Վաչեի օգտին: Ալֆրեդի սենյակում 3 խաղի հաղթող դարձավ Վաչեն: Նա գրկեց մորն ու սկսեց լաց լինել: «Ինդիվիդում ռիսչ» ընկերության տնօրենը նրան հանձնեց 1000 դոլարով փոքրիկ ճամպրուկը: Խաղի մասնակիցներին ու հատկապես հաղթողին շնորհավորելուց հետո մասնակիցները մեկնեցին Ձեյթունի մանկատուն՝ իրենց նվերները երեխաներին բաժանելու: Նրանց մաղթում ենք հաջողություն, իսկ հաջորդ խաղի մասնակիցներին՝ հաղթանակ:

ՈՒՂԵՐՁ

Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի օտարերկրացի եւ հայազգի բժիշկ շրջանավարտներին, բոլոր բարեւարներին:

Սիրելի՝ հայրենակիցներ, գործընկերներ

2002թ-ին ստեղծվել է «Երեւանի պետական բժշկական համալսարան» հիմնադրամը: Հիմնադիրներն են՝ Երեւանի պետական բժշկական համալսարանը՝ ի դեմս ռեկտոր, ակադեմիկոս Վիլեն Հակոբյանի եւ համալսարանի շրջանավարտ, ԱՄՆ քաղաքացի, բժիշկ Ջեյքոբ Օրֆալին:

Հիմնադրամի նպատակն է.

1. Նպաստել Հայաստանում բժշկական բարձրագույն, հետբուհական մասնագիտական կրթության եւ բժիշկների մասնագիտական որակավորման կատարելագործմանը:
2. Աջակցել Հայաստանի եւ Սփյուռքի բժշկագիտական, բժշկական կրթության եւ մասնագիտական ներուժի համագործակցությունը:
3. ԵՊԲՀ-ի եւ արտերկրների առողջապահական հիմնարկների համագործակցությամբ ապահովել բժշկագիտության, գործնական բժշկության եւ բժշկական տեխնոլոգիաների ժամանակակից նվաճումների ներդրումը ԵՊԲՀ կլինիկաներում:
4. Նպաստել Հայաստանում ազգաբնակչության բժշկական օգնության, բժշկականխարգելիչ գործունեության հետագա զարգացմանը:
5. Նպաստել արտասահմանյան առաջատար ուսումնագիտական հիմնարկների հետ ինտեգրացմանը բժշկական կրթության ուսումնական ծրագրերի եւ ոլորտների, ինչպես նաեւ գիտահետազոտական եւ գիտամանկավարժական բնագավառներում:
6. Նպաստել բժշկական կրթության, բժշկագիտության, գործնական բժշկության եւ դեղագիտության վերաբերյալ առկա տեղեկատվության տարածմանը:

Հիմնադրամի նպատակների իրագործման համար անհրաժեշտ է կառուցել համալսարանական հիվանդանոց, այն դարձնել լավագույն բժշկական եւ կրթական կենտրոն:

Այնտեղ աշխատելու հնարավորություն կստանան նաեւ արտասահմանում աշխատող հայազգի ճանաչված բժիշկները: Անհրաժեշտ է ձեռք բերել նաեւ ուսումնառության կազմակերպման միջոցներ եւ գրականություն:

Դիմում ենք Ձեզ, սիրելի՝ գործընկերներ, զորավիգ կանգնելու Ձեր մայր կրթօջախին եւ հիմնադրամի անունով ներդնելու Ձեր ավանդները:

Հիմադրամը պատրաստ է հոգաբարձուների խորհրդի կազմում ընդգրկել բոլոր նրանց, ովքեր զգալի ավանդ եւ ցանկություն կունենան խթանելու հիմնադրամի նպատակների իրագործումը:

Հիմադրամի ավանդատուներին կտրվի հավաստագիր եւ նրանց մասին տեղեկություններ կտրվեն ինտերնետ էջում, կտպագրվեն համալսարանի «Աղագա բժիշկ» թերթում եւ հանրապետական մամուլում:

Լիահույս սպասում ենք Ձեր հայրենանվեր առաքելությանը ի շահ մեր մայր կրթօջախի՝ Երեւանի պետական բժշկական համալսարանի:

Հիմադրամի հաշվեհամարն է

HSBC The World's local bank
001-184688-101 USD
001-184688-001 AMD
ինտերնետ էջ՝ www.ysmufoundation.am

ARMENTEL

«ԱՐՄԵՆՏԵԼԸ» ՏԵՂԵԿԱՅՆՈՒՄ Է ԵՐԵՎԱՆԻ 24-ԱՀԿ-Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

Ավարտվել են Երեւան քաղաքի 24 ԱՀԿ-ի վերամիացման աշխատանքները:

Սույն թվականի ապրիլի 1-24-ը ԱՀԿ-ի բաժանորդները կվճարեն տեղական խոսակցությունների ոռոգավճարի համար:

Վերը նշված ԱՀԿ-ի բաժանորդները փետրվար եւ մարտ ամիսների տեղական խոսակցությունների վերաբերյալ տեղեկատվություն կարող են ստանալ իրենց սպասարկման բաժնից, «Հայ փոստի» եւ «Հայխնայբանկի» համապատասխան բաժանմունքներից:

Այն բաժանորդները, ովքեր կցանկանան օգտվել հաստատագրված վարձերի վճարման հնարավորությունից, մարտ ամսվա ընթացքում կարող են վճարումներ կատարել բաժանորդների սպասարկման կենտրոններում, «Հայ փոստի» եւ «Հայխնայբանկի» համապատասխան բաժանմունքներում:

Ծառայությունների տեսակները	Սակագինն առանց ԱԱՀ, դրամ ԱԱՀ, դրամ		Սակագինը, ԱԱՀ-ով դրամ
Հիմնական հեռախոսների բաժանորդային վարձ			
Բնակչություն	750	150	900
Գործարար եւ կառավարական բաժանորդ	2700	540	3240
Տեղական խոսակցությունների ոռոգավճարներ			
Տրամադրվող անվճար ոռոգների չափաքանակը (անկախ բաժանորդների կարգավիճակից)	360 ոռոգ ամսական, յուրաքանչյուր հեռախոսագծի համար		
1 ոռոգ տեղական խոսակցությունների վարձ՝ սկսած 361-րդ ոռոգից			
Բնակչություն	3.33	0.67	4.00
Գործարար եւ կառավարական բաժանորդ	3.45	0.69	4.14
Ինտերնետ ցանցից օգտվելու ոռոգավարձ (1 ոռոգի համար)			
Բնակչություն	0.833	0.167	1.00
Գործարար եւ կառավարական բաժանորդ	0.86	0.17	1.03
Հաստատագրված վճարներ			
Տեղական խոսակցությունների ոռոգավճարների եւ բաժանորդային վարձի հաստատագրված վճարներ (անսահմանափակ տեղական խոսակցություններից եւ ինտերնետ ցանցից օգտվելու հնարավորությամբ)			
Բնակչություն	3000	600	3600
Գործարար եւ կառավարական բաժանորդ	5442	1088	6530

Ծանոթություն՝

Տեղական խոսակցությունների եւ բաժանորդային վարձի հաստատագրված վճարման սկզբունքից օգտվելու դեպքում բաժանորդը պետք է յուրաքանչյուր հաշվետու ամսվան նախորդող ամսվա մինչեւ վերջին օրը ներառյալ «Արմենտել» ՀՁ սպասարկման տեղամասերում կատարի վճարումներ համաձայն սահմանված սակագների:

Հաստատագրված վճարումները ենթակա են ընդունման միայն այն բաժանորդներից, ովքեր վճարման պահին չունեն մատուցված հեռախոսակապի ծառայությունների ժամկետանց պարտքեր:

«ԱՐՄԵՆՏԵԼ» ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայկոոպը հրավիրում է աճուրդի

Այն տեղի է ունենալու 2003 թ. փետրվարի 25-ին, ժամը 12:00-ին, Հայկոոպի շենքում:

Հասցեն՝ ք. Երեւան, Խանջյան 13

Վաճառվում են

«Արտաքսի հանրային սնունդ» ՍՊԸ-ի «Մասիս» ռեստորանը՝ 3622.0 հազար դրամ մեկնարկային գնով:

Աճուրդը կայանալու է դասական եղանակով:

Աճուրդին մասնակցել ցանկացողները մինչեւ 2003 թ. փետրվարի 24-ը, ժամը 16:00-ն աճուրդային հանձնաժողովին պետք է ներկայացնեն

– աճուրդին մասնակցության հայտը

– աճուրդին մասնակցության վճարի անդորրագիրը, մուտքագրման հաշիվն է՝ 142010012508, Ագրոբանկի «Աղասյան» մասնաճյուղ:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել աճուրդային հանձնաժողովին, հեռ.՝ 54-15-04, 54-45-01:

«Տիգրիս» ՍՊԸ ռիելտորական ընկերությունը Երեւանի «Աղամանդ» առեւտրահանգիստային բոլորայի հարթակում աճուրդային վաճառքի է ներկայացնում՝

Արտադրական համալիր, այդ թվում՝

– Պահեստներ, պահեստներ, սան. հանգույց, պոմպակայաններ, արտադրամասեր, ենթակայան, վարչական շենք (ընդ. մակերեսը՝ 11179.7 քմ):

Մեկնարկային գինը՝ 40617000 դրամ:

– Մեքենասարքավորումներ ամբարձահեծաններ, այծիկավոր կռունկ, կամրջակային ամբարձիչներ, թուջահալոց, երկաթգծի ռելսեր եւ այլն:

Մեկնարկային գինը՝ 1460000 դրամ:

Հասցեն՝ ք. Երեւան, Շենգավիթի համայնք, Մասիսի փող. 99

Աճուրդները՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով, 2003 թ. փետրվարի 24-ից յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, ժ. 13:00-ից, ք. Երեւան, Մհեր Մկրտչյան 5 հասցեով:

Armenian products EXPO

Ձեռնարկությունների ղեկավարների ուշադրությանը

LOGOS EXPO կենտրոնը տեղեկացնում է Ձեզ Ազգային Ցուցահանդեսային Կենտրոնի բացման մասին, որի տարածքում իր աշխատանքն է սկսում

Armenian products EXPO

առևտրա-արդյունաբերական ցուցահանդեսը

Ցուցատաղավարների վերապահման և բոլոր լրացուցիչ հարցերով դիմել հետևյալ հասցեով՝

ք. Երևան, Աբովյան 16, Հեռ./Ֆաքս. 56 4218, 56 6367

E-mail: expo@expo.am Web: www.expo.am

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 5000 Ստորագրված է տպագրության՝ 14. 2. 2003 Գինը՝ 100 դրամ